№ 266 ԿԻՐԱԿԻ, 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 266

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նախ. հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամականիշով:

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ:

Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարիամ Յարութիւնեան Կազանճեան իր զաւակներով, ՍՏԵՓԱՆ, Յովհաննէս, Մկրտիչ Յարութիւնեան ՔԻՐՔՃԵԱՆՆԵՐԸ սրտի խորին կսկիծով յայտնում են իրանց ազգականներին ու ծանօթներին իրանց սիրելի և անմոռանալի մօր՝

Բրաբիօն Յարութիւնեան ՔԻՐՔՃԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 26-ի գիշերը: Ամբիծքն այսօր, երեկոյեան ժամը 7-ին: Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, երկուշաբթի, նոյեմբերի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Նիկոլայեվսկայա փող. № 75) դէպի Կուկիայի կաթօլիկաց եկեղեցին, ուր կը մատուցվի պատարագ: Թաղումը Կուկիայի կաթօլիկաց գերեզմանատանը: 1323. 1—1

Ստեփան Յարութիւնեան և Օրօզիկ Գէորգեան ԴԱՒԹԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին՝ առաջինն իր թանգագին քրոջ, իսկ երկրորդն իր սիրելի տալոջ

Բրաբիօն Յարութիւնեան ՔԻՐՔՃԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 26-ի գիշերը: Ամբիծքն այսօր, երեկոյեան ժամը 7-ին: Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, երկուշաբթի, նոյեմբերի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Նիկոլայեվսկայա փող. № 75) դէպի Կուկիայի կաթօլիկաց եկեղեցին, ուր կը մատուցվի պատարագ: Թաղումը Կուկիայի կաթօլիկաց գերեզմանատանը: 1323. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Անդամակցական և կանդիդատական տոմսակներ առաջիկայ 1911 թւականի վերաբերմամբ նորոգելու համար ժողովարանի գրասենեակը բաց կը լինի ամեն օր ցերեկվայ ժամը 1-ից մինչև 2-ը և երեկոյեան ժամը 8-ից մինչև 11-ը:

Տոմսակները վերանորոգելու ժամանակամիջոցը լրանում է դեկտեմբերի 14-ին (§ 15 Կանոնադր. Ժողով.):

(Կ.) առ. 1315. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի Ժողովարանի Աւագների Խորհուրդը հրաւիրում է նրանց, որոնք կը ցանկանան ստանձնել Ժողովարանի գրադարանի համար պահանջվող

ԳՐԱԴԱՐԱՆԱՊԵՏՈՒՀՈՒ ՊԱՇՏՕՆԸ,

ներկայացնել խնդիր մինչև դեկտեմբերի 15-ը 1910 թ.:

Ռոճիկ՝ 420 րուբլի տարեկան:

Խնդիրներն ընդունվում են Ժողովարանի դրասենեակում ամեն օր՝ երեկոյեան ժամը 8-ից մինչև 10-ը:

Թիֆլիսի Ժողովարան
(Ձմեռային շէնութիւն)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը՝ հայոց ներկայացում, զինւորական երաժշտական խումբ, սազանդար և ՊԱՐԵՐ:
ՇԱԲԱԹ օրերը՝ սազանդար:
ԿԻՐԱԿԻ օրերը՝ սինեմատօգրաֆ:

Հիւրերը մուտքի համար վճարում են՝ անդամների յանձնարարութեամբ՝ թէ կանայք և թէ տղամարդիկ—50-ական կոպ., իսկ ուսանողները՝ 25-ական կոպ.:

Երեկոյթների սկիզբը ժամը 8-ին:

(Կ.) առ. 1148. 0—9

Գայիանեան Դպրոցի Հոգաբարձութիւնը

Ժողովի է հրաւիրում Մուղնու ծխականներին այս կիրակի, նոյեմբերի 28-ին, ցերեկվայ ժամը 12-ին: Հրաւէրը վերջնական է:

(ա.օ.) առ. 1317. 3—3

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ և ԿՈՄ.“ ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի „ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ“ ռուսական էլեքտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բեռլինի „ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ“ ակց. ընկ., Բեռլինի „ՍԻՄԷՆՍ ՇՈՒԿԵՐՏ-ՎԷՐԿԷ“ ակց. ընկ., Կօլոմնի մեքենագործական ընկ. և եղբ. „ԿՐՕՍԼԷՅ“ անգլիական գործարանի ներկայացուցիչներ:

ՋԱՓՍԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	ՀՈՍԱՆՔԱՉԱՓ, ամպերմէտրներ, վոլտմէտրներ և ամեն տեսակ հաշւեցոյց ապարատներ փոփոխվող և մշտական հոսանքի համար:
ԷԼԵՔՏՐՕ-ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	„ՌԷՆՏԳԷՆԻ“ ապարատներ բոլոր պատկանելիքներով: Միւսորոշ ապարատներ՝ ԿԱՈՒՍՏԻԿԻ, ԳԱԼՎԱՆԻԶԱՑԻԱՅԻ, ԷԼԵՔՏՐՕԼԻԶԻ-ՅԻ, ֆարադիզացիայի համար, և այլն:
ԱՎՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Ավտօմօբիլներ «ՊՐՕՏՕՍ», էլեքտրաշարժ և բենզինաշարժ: „Մօտօրների մակոյկներ“: Ավտօմօբիլային պատկանելիքներ:
ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Ջերմային շարժիչներ „ԴԻԶԷԼԻ“ — հում նաւթի, մազութի համար և այլն, միանգամայն ձեռնտու: Գազային շարժիչներ «ԳԻՒԼԴՆԷՐԻ»: Նաւթային, կէրօսինային, գազային շարժիչներ „ԿՐՕՍԼԷՅԻ“:

ՊԱՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլեքտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեքտրական կառուցվածքների համար և այլն:

ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման:

Տելեֆօն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.

№ 2. (Կ.) (առ.) 432. 26—17

ՆԵՐԿ. 10. ԱԲՕՆԵՄԵՆՏԻ ՀԱՇԻՒՆ № 6.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, նոյեմբերի 29-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ՅԻՄԱՐԸ

Կատակերգութիւն 4 գործ., Ֆուլդայի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի.
Մասնակցում են. տ. տ. [illegible] Գուլազեան, Պարեան-Արմէնեան, Զարէ, Ժասմին, պ. պ. Ալլահվերդեան, Արմէնեան, Աւետեան, Ղազարեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Շահխաթունի, Ռշտունի և ուրիշ.:
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին է:
Գլխ. ռէժիսոր՝ Ա. Արմէնեան

Ուրբաթ, դեկտեմբերի 10-ին Արքունական թատրոնում օր. ԱԴԱՄԵԱՆԻ բենեֆիսին «ՌՕՄԷՕ ԵՒ ՋՈՒԼԻԷՏ»:

1320. 2—2

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

I
ԾԱՂԿԵՓՈՒՆՋ
Ամենատարածված ընտիր երգերի ընդարձակ ժողովածու. երրորդ տպագրութիւն:
Գինն է 50 կոպ.

II
ԾԱՂՐԱԾՈՒ
Ժամանակակից կեանքից վերցրած հետաքրքրական և ծիծաղաշարժ անեկդօտների ընդարձակ ժողովածու:
Գինն է 50 կոպ.

III
ՌՈՒՍԵԱՆ ՊԱՆԴՈՒԽՏ
Օտարութեան դիմողների կեանքից վերցրած:
Գինն է 15 կոպ.

Գումարով գնողներին 20—25% զեղչ: Պահեստը «Կենտրօնական գրավաճառանոցում»:
Դիմել՝ Тифлисъ. Центральной книжной торговлѣ.

(Կ.) առ. 1297. 3—2

НОВАЯ КНИГА
ПО ВОСТОКОВѢДѢНІЮ
„АРМЕНІЯ“.

Путевые очерки и этюды Х. Ф. Б. ЛИНЧА.
Переводъ съ англійскаго Елизаветы Джунковской.
Въ 2-хъ томахъ. Со 197 иллюстр.
Томъ I.—Русскія провинціи. 597 стр.
Томъ II.—Турецкія провинціи. 679 стр.
Цѣна за два тома въ роскошныхъ переплетахъ 18 рублей.
Складъ изданія въ Центральной Книжной Торговлѣ въ Тифлисѣ.

(Կ.) առ. 1226. 5—5

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

II

Որքան մեծ տնտեսական և հասարակական բարիքներ առաջացած կը լինէին թէ Փոքր-Ասիայի և թէ Անդրկովկասի համար, եթէ թիւրքական սահմանները այնքան անհիւրընկալ դարձած չը լինէին երթևեկութեան համար և երկաթուղիները տուած լինէին երկու երկրներին այնպիսի աշխոյժ հաղորդակցութիւն միմեանց հետ, ինչպէս այդ տեղի ունի օրինակ գերմանական սահմանագլխի վրա:

Մինչդեռ ուրիշ երկրներում ամեն տեսակ ջանք են գործ դնում զարգացնել և արագացնել հաղորդակցութիւնը, մեր սահմանագլխում բոլորովին հակառակն էր արված, ամեն եռանդ գործ էր դրված սահմանափակելու և դանդաղեցնելու յարաբերութիւնները, խեղդելու և ոչնչացնելու երկու երկրների տնտեսական փոխադարձութիւնները:

Այդպիսի դրութիւն գուցէ ձեռնտու է եղել արևմտեան Եւրոպայի մի քանի պետութիւնների բացառիկ շահերի համար, որովհետև Թիւրքիան զրկված Ռուսաստանի հետ յարաբերութիւններից, ստիպված էր ստանալ իր ցանկացած ապրանքները Արևմուտքից և այնտեղ ուղարկել իր մթերքները:

Այժմ սկսվում է փոխվել իրերի վիճակը: Եւ արդէն փոխադարձութեան պահանջը շաւիղներ է որոնում աւելի ընդարձակ գործառնութիւններ իրականացնելու:

Մենք հաղորդեցինք, որ հիմնվում է ռուս-թիւրքական առևտրական բանկ բազմաթիւ բաժանմունքներով:

Հիմնադիրների ցուցակում հանդիպում ենք Պետական Դումայի անդամ ֆինանսագէտ Ֆէօդորովի, բանկային գործող Մարկօնի, յետոյ Ստախովիչի, Գուչկովսկիի, Եազըկովի անունները:

Այդպիսի մի բանկ ընդունակ կը լինի առաջ բերել լայն գործունէութիւն այն ժամանակ, երբ հանդէս կը գան և ուրիշ աջակից պայմաններ զարգացնելու առևտրական-արդիւնագործական յարաբերութիւնները երկու հարևան երկրների միջև: Եթէ նոյն իսկ չը լինէր այդ բանկը, ուրիշ բանկեր իրանց վրա կը վերցնէին կատարելու այն դերը, ինչ որ այժմ ցանկանում է նոր հիմնվող ռուս-թիւրքական բանկը:

Իսկ որպէսզի երկու հարևան երկրների միջև առաջ գան սերտ տնտեսական յարաբերութիւններ և ապրանքների փոխանակութիւն, կարևոր է դիմել մի շարք օժանդակիչ միջոցների, որոնք ծանօթացնէին երկու երկրների արդիւնագործներին և սպառողներին միմեանց հետ և ուղիներ հարթէին նրանց բանակցութիւնների և փոխադարձ գործակցութեան համար:

Եթէ մի ցուցահանդէս և համագումար կազմված Թիֆլիսում կամ Կ. Պոլսում առիթ ընծայէր երկու պետութիւնների գործողներին թէ տեսնելու իրանց արդիւնագործութեան արգասիքները և թէ խորհրդակցելու իրանց կարիքների ու շահերի մասին, անշուշտ, մի քայլ առաջ դրված կը լինէր այդ ասպարէզում:

Եթէ գործարանատէրերի յատուկ գործակալներ պտտէին իրանց ապրանքների նմուշներով երկու երկրների վաճառաշահ կենտրոններում և մի քանի տեղերում բանային պահեստներ, անշուշտ, կը հաստատվէր կապ վաճառականների և արդիւնագործների միջև:

Ոչ Ռուսաստանի և ոչ Թիւրքիայի նոյնիսկ խոշոր քաղաքները չունեն արդիւնաբերական թանգարաններ, որտեղ հանդէս դրված լինէին այդ երկրների այս ու այն շրջանի արդիւնքները:

Դիւրութիւն չեն ընծայում նաև պօստային և մաքսային հաստատութիւնները: Բազմաթիւ ձևականութիւններ և դանդաղ գործավարութիւնը դժւարացնում և ձանձրացնում են գործի մարդկանց և նրանք ձեռք են քաշում նոյնիսկ ձեռնտու գործերից, գլխացաւանքներից ազատ մնալու նպատակով:

Երկու պետութիւնների միջև յարաբերութիւնները աւելի սերտ դարձնելու և տնտեսական խոշոր գործ առաջ տանելու համար կարևոր է, որ մի կողմից պաշտօնական յատուկ մասնաժողովներ, իսկ միւս կողմից առևտրաարդիւնաբերական դասի ներկայացուցչութիւնը լուրջ կերպով դնեն հարցը քննութեան սեղանի վրա և մշակեն գործունէութեան ծրագիր:

Ա. Քալանթար

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Լոնդօն, 26 նոյեմբերի

Մինչև գիշերվայ ժամը 1-ը ընտրվել էին 418 հոգի, որոնցից 147 լիբէրալ, 193 ունիօնիստ, 28 բանւոր, 45 ռեդմօնդիստ և 5 օբրիէնիստ: Լիբէրալները շահեցին 13 նոր տեղ, բանւոր կուսակցութիւնը 4, ունիօնիստները 19: Երեկոյեան տեղի ունեցան անկարգութիւններ Բէլֆաստում. մի քանի ընտրարանների պատուհանները ջարդվեցին:

Մինչև ցերեկվայ ժամը 5-ը ընտրվեցին 156 լիբէրալ, 207 ունիօնիստ, 29 բանւոր, 54 ռեդմօնդիստ, 5 օբրիէնիստ: Լիբէրալները շահեցին 14 տեղ, ունիօնիստները 21, բանւորները 4: Իրլանդիայի ձայների թիւը յօգուտ ունիօնիստների բաւականաչափ մեծացաւ: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 26 նոյեմբերի

Ձմեռային պալատում Բարձրագոյն ճաշին Կայսրը խմեց Գէորգիէվսկի կավալերների կենաց: Ծերունի Կոմարովը առաջարկեց Նորին Մեծութեան կենացը, որ ընդունվեց ցնծագին ուռաներով և հիմնով: Ճաշից յետոյ Կայսրը մեկնեց Ցարսկոէ Սէլօ:

Պետական Դումայի անդամ Մարկով 2-րդ ընտրվեց ռուս ժողովրդի միութեան նախագահի օգնական:

Ներքին գործերի մինիստրը ուղարկեց պաշտօնեայ Պետրօվին Անդրկովկաս, Բեսարաբիայի և Տաւրիկեան նահանգները՝ տեղում ուսումնասիրելու համար հայ-լուսաւորչական եկեղեցու կենցաղական պայմանները և հայկական կօնֆեսիօնալ դպրոցների կրթական գործի դրութիւնը:

Մինիստրների խորհուրդը ընդունեց Պետական Դումային ներկայացնելու համար ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի առաջարկութիւնը՝ բաց թողնելու 300,000 րուբլի Կովկասի գլխաւոր լեռնաշղթայով երկաթուղի կառուցանելու նախնական աշխատանքների համար: (Հ. Գ.)

Կալկաթա, 26 նոյեմբերի

Մահմեդականների և հնդիկների միջև կռիւներ են: Հնդիկները խանութները փակել են: Մասամբ առևտրական կեանքը կանգ է առել: Ժողովված են ուժեղ ոստիկանախմբեր: Երեքշաբթի օրը մեծ բայրամն է. երկիւղ են կրում փողոցային անկարգութիւններից: (Հ. Գ.)

Օպօրտօ, 26 նոյեմբերի

Ձերբակալվեց նախկին գլխաւոր գանձապահը, որ մեղադրվում է պետական միջոցներից այլիացած Մարիա-Պիա թագուհու պարտքերը վճարելու մէջ: (Հ. Գ.)

Պարիզ, 26 նոյեմբերի

Գաղութների մինիստրը յայտնեց պալատի մասնաժողովին, որ նա կը հրամայէ փոխարինել Վադայում զոհ գնացած ծառայողների կազմը, չը նախորոշելով այն միջոցները, որ ձեռք կառնէ յետագայում: Պալատը յարգեց Վադայում զոհվածների յիշատակը: Հարցապնդումները Վադայի դէպքերի մասին կը քննվեն դեկ. 3-ին: (Հ. Գ.

Պարիզ, 26 նոյեմբերի

Կառավարութիւնը համաձայնեց, որպէսզի Վատիկանի աւստրօ-ունգարական դեսպան կոմս Սեչէնի Եմերինը դեսպան նշանակվի Պարիզում:

Լեգանիէն սահմանեց աշխարհային նոր մրցակէտ՝ բարձրանալով 3,200 մետր բարձրութիւն: (Հ. Գ.)

Բեռլին, 26 նոյեմբերի

«Դէյտշէ - Մեդից.-Վեխենշրիֆտում» յայտարարված է, որ բոլոր բժիշկներին թոյլ է տրվում ազատ գործածել Էրլիխի դեղը: Դեղի պաշտօնական անունն է «Սալվարսան»: Պատրաստելու վրա հսկելու է Էրլիխը. վաճառքի մէջ արժէ 10 մարկ:

Րէյխստագ: Բիւջէի առաջին ընթերցումը: Պետական գանձատան ստատս-սեկրէտարը ընդգծեց գերմանական ֆինանսների պրոգրեսիվ բարելաւումը և մատնանշեց, որ զինւորական վարչութեան 1909 թւի նախահաշիւը, որ հասաւ 804 միլիօնի, մնում է նոյն գումարով և 1911 թւին. սակայն գերմանական զօրքի խաղաղ կազմը մերձակայ հինգ տարում պէտք է աւելանայ համաձայն տեխնիկայի պահանջների: Զինւորական մինիստրը յայտնեց, որ Գերմանիայի քաղաքական նշանակութիւնը բաւականաչափ հիմնված է զօրքի ռազմական ոյժի վրա, որի շնորհիւ Գերմանիան բարդութեան դէպքում կարող կը լինի թշնամուն վանել հայրենիքի սահմաններից (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրը թոյլ տուեց կազմել Բագւում մի միջվարչական մասնաժողով, նաւթային արդիւնաբերութեան դրութեան հարցը քննելու համար լեռնային խորհրդի անդամ Իվանովի նախագահութեամբ:

Առեւտրի մինիստր Տիմաշեվը մերժեց Մայկոպի նաւթարդիւնաբերողներին մշտական համագումարներ կայացնել։

Պետական Դումայի բիւջետային մասնաժողովի մէջ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ներկայացուցիչը յայտնեց, որ մինիստրութիւնը հրաժարվում է ամեն տարի փող ընդհանուր ուսման համար։

Կադէտները Պետական Դումային հարցապնդում են ներկայացնում ներքին գործերի մինիստրի՝ ազնուականների ժողովների մասին արձակած հրահանգի ապօրինութեան մասին։

Հոկտեմբերեանները բարձր շրջանների ցուցմունքով Պետական Դումային առաջարկելու են առաջին հերթին քննել բանւորական հարցի օրինագիծը։

Արգելվեց դասախօսութիւնների ընթերցումը Տոլստոյի մասին բանւորական թաղամասերում։ („Б.“)

—

Մոսկվա.—Պետական Դումայի անդամի ընտրութիւնը Գոլովինի փոխարէն մտադրվում է կայացնել ապրիլ ամսին։

Քաղաքը մտադիր է գնել Սօֆիա Անդրէեւնայից Տոլստոյի կալուածքը Խամօվնիչեսկայա փողոցում։ („Б.“)

—

Կիեվ.—Լուրեր են պտտում համառուսական շաքարի տրէստ կազմելու մասին ամերիկական օրինակով։

—

Վլադիվօստօկ.—Բժիշկ Բերվենշը հեռագիր ուղարկեց Պետերբուրգ և պահանջեց անյապաղ արտակարգ միջոցներ ժանտախտի դէմ, որովհետև ժանտախտը սպառնում է Ռուսաստանին և Եւրօպային։ Կառանտինները բաւարարութիւն չեն տալիս։ Վճռված է հրաւիրել եապոնացի բժիշկներ։ („Б.“)

—

Վատտենշէյդ, 26 նոյեմբերի

Հօլլանդ հանքում գազի պայթումից սպանվեցին 6, ծանր վիրաւորվեցին 4 մարդ։ (Հ. Գ.)

—

Բարնաուլ, 26 նոյեմբերի

Գինու խանութների դրամահաւաք Կրավչեւինը ժողովելով 19 խանութներից մօտ 30,000 ր.՝ փախաւ։ (Հ. Գ.)

—

Մոսկվայի երաժշտական շրջաններում միտք է յղացել կանգնեցնել Մոսկվայում արձան Պ. Չայկովսկիին։ («Н. В.»)

—

«Каспій»-ին հեռագրում են Պետերբուրգից, որ յաճախակի գրաւոր միջնորդութիւններից յետոյ, կոմս Լէվ Լվովիչ Տոլստոյը վերջապէս ընդունվեց սինոդի օբեր-պրոկուրոր Լուկյանովից, որին նա, լուրերին նայած, յանձնեց հանգուցեալ Լէվ Տոլստոյի իրան և կոմսուհի Սօֆիա Անդրէեւնային գրած նամակների մի ամբողջ կոյտ։ Այդ նամակների մէջ, ինչպէս հաւաստիացնում են, Տոլստոյը հոգեկան վիշտ է յայտնում, որ եկեղեցին նրան չը ճանաչեց։ Լէվ Լվովիչը խնդրեց օբեր-պրոկուրորից, յենվելով այդ նամակների վրա, սինոդում հարց յարուցել վերաքննելու Տոլստոյի բանադրանքի խնդիրը։ Լուկյանովը առաջարկեց նրան այդ մասին միջնորդութիւն յարուցել պաշտօնական կարգով։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ձեռնարկեց ուղարկելու հրահանգներ ու բլանկներ, որ մշակել է նա պետութեան տարրական դպրոցների միօրեայ վիճակագրութեան համար։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կ. Պոլիս, 26 նոյեմբերի

Պալատ։ Մեծ վէզիրը, վերսկսելով ճառը, մանրամասն պատասխանեց օպպօզիցիայի յարձակումներին առանձնապէս մինիստրների վերաբերմամբ։ Խօսելով Ալբանիայի մասին, նա վիճակագրական տեղեկութիւններով ապացուցանում է, որ երկիրը խաղաղվել է զինաթափութեան շնորհիւ։ Վէզիրը չէ հաւատում ոչ-ալբանացի պատգամաւորների անկեղծութեան, որոնք ալբանական հարցը ընտրել են իբրև կռուի զէնք կաբինէտի դէմ։ Փոխառութեան հարցում վէզիրը բացատրեց, որ Ֆրանսիան կամենում էր իրական կօնտրօլի, իսկ Թիւրքիան վճռեց բաւականանալ փոխառութիւնների ժամանակ առանց պետական պարտքի կառավարութեան միջնորդութեան։ Թիւրքիան այդ տեսակ կօնտրօլին համաձայնել չէր կարող։ Ինչ վերաբերում է եւրօպական մամուլի տոնին, վերջինս փոփոխական է։ Թիւրքիան կարող է չէզոք մնալ եռապետեան համաձայնութեան խմբակցութեան մէջ, որովհետև այդ խմբակցութիւնները պայմանաւորված են պետութիւնների՝ Թիւրքիայի համար կողմնակի շահերով։ «Համաձայն պարիզեան պայմանագրի,—շարունակում է վէզիրը,—բոլոր պետութիւնները կողմնակից են անկեղծաբար մեր անձեռնմխելիութեան։ Ես ասում եմ, որ մենք կարող ենք և կամենում ենք բոլորի հետ ապրել բարեկամաբար։ Կրետական հարցը վտանգաւոր չէ. մեծ պետութիւնները Կրետէն Յունաստանին չեն յանձնի. մենք նոյնպէս այնտեղ չենք գնայ»։ Վէզիրը իր 6 ժամ տեւող ճառը վերջացնում է՝ կարդալով հիւպատոսների դեկլարացիան՝ ուղղված կրէտական ժողովի մահմէդական պատգամաւորներին։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 26 նոյեմբերի

Ի նկատի ունենալով, որ պարսից կառավարութիւնը խուսափեց վարձատրել գաշնանը Գիւմիւշթեփէում սպանված երկու ռուս կօզակների համար, Աստրաբադի հիւպատոսը ռուս կօմիսարի հետ ձեռնարկեց պահանջելու ռուսաց կառավարութեան պահանջած 10,000 ր. Գիւմիւշթեփէի բնակիչներից, որոնք մարդասպաններին թաքցրել էին։ Փողերը ժողովվեցին առանց միջադէպերի։ (Հ. Գ.)

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ, ՀԵՂԵՂՆԵՐ ԵՒ ԵՐԿՐԱՇԱՐԺ

Պարիզ, 26 նոյեմբերի

Սենատը 5.800,000 ֆրանկ յատկացրեց հեղեղից վնասվածների օգտին։ (Հ. Գ.)

—

Լիսաբոն, 26 նոյեմբերի

Փոթորիկը արմատախիլ արեց բազմաթիւ ծառեր, կտրտեց էլեքտրաքարշի և հեռագրական թելերը։ Սպանվեցին երկու, մահացու վիրաւորվեց մի մարդ։ (Հ. Գ.)

—

Օպօրտօ, 26 նոյեմբերի

Փոթորիկը մեծ վնասներ պատճառեց. շատ փողոցներ ջրի տակն են։ Փչացաւ երկաթուղագիծը Դուէրօյի մօտերը։ (Հ. Գ.)

—

Սէրբէր, 26 նոյեմբերի

Սպանիայի արեւմտեան մասում ցիկլօն է։ Բիլբաօյի գաւառում մի քանի մարդ զոհվեցին. կան շատ վիրաւորներ։(Հ. Գ.)

—

Ամպուլա (Տանժէր), 26 նոյեմբերի

Երկու սպանական նաւեր փոթորկի ժամանակ խորտակուեցին Լարրաշէի բարձունքներին. խեղդվեցին 16 մարդ։ (Հ. Գ.)

—

Ֆլորենցիա, 26 նոյեմբերի

Կէսօրին մօտերը քաղաքում և շրջակայքում զգացվեց ուժեղ երկրաշարժ. վնասվածներ չը կան։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՈԼՍՏՈՅԻ ՄԱՀԸ

(Նամակ Աստրախանից)

Գերեզման իջաւ համաշխարհային տաղանդը... Նա, այդ 82-ամեայ ծերունին, որ իր ամբողջ կեանքը սէր և ճշմարտութիւն էր քարոզում... Նա, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին զբաղեցնում էր աւետարանի ինքնուրոյն վարդապետութեամբ և մօրալով...

Նա այսօր յաւիտենականութեան գիրկն է անցնում։

Նա այլ ևս չը կայ։

Եւ այսօր ամբողջ աշխարհը, մեծ թէ փոքր, ծեր թէ երիտասարդ, այր թէ կին, գիւղացի թէ ազնուական—բոլորը, բոլորը ողբում են մեծ մարդասէրի, գեղարուեստագէտի, հսկայ մտածողի, արի աշխատաւորի, հանճարաւոր մարդու մահը։

Այսօր ամբողջ գիտական աշխարհը իր տաղանդաւոր ներկայացուցիչների միջոցով գլուխ է խոնարհեցնում Լ. Տոլստոյի թարմ շիրմի առաջ, մարդու, որը իր ամբողջ կեանքը իր քարոզած վարդապետութեան կենդանի օրինակը դարձրեց...

Նա ինքնուրոյն մտածեց, ինքնուրոյն ապրեց և ինքնուրոյն վախճան ու թաղում ունեցաւ... Քաղաքացիական թաղում։

Այո, աշխարհը իրարանցման մէջ է։

Սուգ է պատել նրան...

Բոլորը, բոլորը զգում են, որ մի մեծ և անփոխարինելի բաց է առաջացել։

Այդ ընդհանուր մարդկային սուգին մասնակցեց և Աստրախանը։

Կիրակի, ամսիս 7 ի առաւօտեան հէնց որ ստացվեց Տոլստոյի մահը գուժող հեռագիրը, իսկոյն տեղական «Астрах. Листокъ» լրագիրը յաւելուած հեռագիրներ բաց թողեց և քաղաքիս ամբողջ ազգաբնակութիւնը իմացաւ մեծ կորստեան մասին։

Հէնց նոյն երեկոյեան ժողովարանում նշանակված ներկայացումը յետաձգվեց. իսկ թատրոնի ներկայացումը տեղի ունեցաւ ոստիկանութեան պահանջմամբ։

Ցաւակցական հեռագիրներ ուղարկվեցին հանգուցեալի այրուն կադէների կուսակցութեան, տեղիս փաստաբանների, հայ գրական-գեղարուեստական ընկերութեան և այլ հիմնարկութիւնների կողմից։

Քաղաքային դուման իր նիստում պատվեց հանգուցեալի յիշատակը ոտքի կանգնելով։

Իսկ հայ-գրական-գեղարուեստական ընկերութիւնը որոշել է հերթական երեկոներից մէկը նուիրել մեծ գրողի յիշատակին։

Ս. ք. Ասլանեան

Աստրախան, 15 նոյեմբ.

ՎԱՀԱՆ ԳԱՐԻՆԵԱՆ

—

Այսօր Թիֆլիսում թաղում են երիտասարդ լեզուագէտ Վահան Գարինեանին։

Նա մեռաւ 30 տարեկան հասակում՝ ծանր հիւանդութիւնից յետոյ։

Նա պատկանում էր նոր ուղղութեամբ գործող գրական աշխատաւորների այն դասին, որոնք քննադատաբար են վերաբերվում հայ լեզուի և պատմութեան նիւթերին և աշխատում են վերամշակել նրանց եւրօպական գիտութեան մեթօդներով։

Աւարտելով իր լեզուագիտական կրթութիւնը Լազարեան ճեմարանում, լսելով արեւելագիտութեան դասեր Պետերբուրգի համալսարանում, յաճախելով Բերլինում մասնագիտական մի շարք դասախօսութիւններ, ուսումնասիրելով լեզուագիտական և պատմագիտական գրականութիւնը, նա պատրաստվել էր գիտական աշխատութիւնների համար։

Սակայն վաղահաս մահը վերջ դրեց երիտասարդ լեզուագէտի կեանքին։

Մնացել են չը վերջացրած երկասիրութիւններ, որոնք կարօտ են խմբագրական աշխատանքի՝ լոյս ընծայելու համար։

Վ—ն

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

Պետերբուրգ, 26 նոյեմբերի

Նախագահում է Կապուստին։

Հերթին տարրական ուսուցման օրինագծի 13-րդ բաժինն է, որ դպրոցական խորհուրդներին է տալիս տարրական դպրոցներում ժողովրդական ընթերցանութիւններ կազմակերպելու և գրադարան-ընթերցարաններ բանալու թոյլատուութեան իրաւունքը։

Մարկով 2-րդ մատնանշում է, որ քննվող բաժինը հանդիսանում է յեղափոխական շղթայի նոր օղակ, որպիսին կռում են Ռուսաստանի դէմ Ֆօն-Անրէպը, Կօվալեվսկին, Կլիւժեվը և ազնուականութեան պարագլուխ իշխան Կուրակինը։ Երբ զէմստվօն կը գտնվի յուսալի ձեռքերում, միտինգներ դպրոցներում չեն թոյլատրվի։ Դպրոցական խորհուրդների կազմը և նրանց տրվող լայն լիազօրութիւնները չեն երաշխաւորում օրինական կարգը, որովհետև խորհուրդների մէջ կը գերակշռեն ռուսաց պետութեան բացարձակ թշնամիներ՝ հրէաները։ Իշխանութիւնը անզօր կը լինի կռիւ մղել յեղափոխական բոյների դէմ։

Կօվալեվսկիի բացատրութիւնից յետոյ բաժինն ընդունվում է։

Դուման դիմում է 14-րդ բաժնի քննութեան, որի համաձայն ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան տնօրէնութեանն են անցնում սինոդի իրաւասութեան տակ գտնվող եկեղեցական ծխական դպրոցները։

Եւլօգի եպիսկոպոսը և ուրիշ հոգեւորականներ եռանդով պաշտպանում են եկեղեցական-ծխական դպրոցի անկախութիւնը։

Փակվում է նստաորների ցուցակը։ Մնացել են 53 հոգի։

Իշխան Տենիշեվը, Լվով 1 ինը, Կարաուլովը խօսում են յօգուտ աշխարհիկ դպրոցը եկեղեցականից անջատելու. (Հ. Գ.)

ՉԽԵԻՁԷԻ ԳՈՐԾԸ

—

Պետերբուրգում նոյեմբերի 20 ին տեղի ունեցաւ այն մասնաժողովի առաջին նիստը, որ ընտրվեց Ն. Ս. Չխեիձէի գործը քննելու համար։ Մասնաժողովի նախագահ ընտրվեց Մակլակովը, իսկ զեկուցանող՝ Ե. Կօվալեվսկին։

Մակլակովի կարծիքով, Պետական Դուման պէտք է Չխեիձէի գործը քննէ ըստ էութեան։

Բուլատի ասածը այն մասին՝ թէ Ստոլիպինի նամակը հասցէագրված է ոչ թէ Պետական Դումայի նախագահի անունով, այլ իշխ. Վոլկոնսկիին, նշանակութիւն չունի։ Չխեիձէի գործը պէտք է քննել իբրև այդ պատգամաւորի լիազօրութիւնների երկրորդ ստուգութիւն, որովհետև նոր հանգամանքներ պարզելու ժամանակը դեր չէ խաղում նրա համար, որպէս զի նրանք ուշադրութեան առնվեն։ Եթէ ընտրողական մասնաժողովը իրաւունք ունի երկրորդ անգամ քննել ընտրութիւնների կանօնաւորութեան հարցը, անտրամաբանօրէն է, ինչպէս կարծում է Մակլակովը, զրկել Դումային այդ իրաւունքից։ Այդ տեսակէտների հիման վրա Մակլակովը կողմնակից է որպէսզի Չխեիձէի գործի առիթով բոլոր փաստաթղթերը պահանջվեն։

Հրաւիրված Չխեիձէն յայտնեց, որ նա ապրել է Թիֆլիսում Կունցեվիչի տանը մի տարի ու երեք ամիս, 1906 թւի ապրիլից մինչև 1907 թւի յուլիսը, և վճարել է ամսական 16 ր.։ Գրաւոր փաստաթղթեր նա չունի, որովհետև Թիֆլիսում գոյութիւն չունին բնակարանային պայմանագրեր, բնակարանային գրքոյկներ, իսկ բնակարանի վարձը վճարվում են սովորաբար առանց ստացականների. բայց նա պատրաստ է իր ասածները հաստատել վկաների ցուցմունքներով։

Իշխ. Բօբրինսկին ասում է, որ վկաներ հարցաքննվելու են երկու կողմից էլ։

Վերջ ի վերջոյ մասնաժողովը, բաց թողնելով վկաներ հարցաքննելու հարցը, ինչպէս յայտնի է, որոշեց պահանջել հետևեալ փաստաթղթերը. 1) Թիֆլիս քաղաքում ընտրութեան իսկական կատարումը, 2) պրիստաւի օգնական Գվատուայի դատական գործը և 3) Կունցեվիչի տնային գիրքը։ («С.-П.В.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Մենք ստացանք «Եգիպտոսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան» տարեկան տեղեկագիրը (1909—1910 թ.), որ շատ ընդարձակ է և որի մասին շուտով կը տանք մի մանրամասն յօդուած։ Միութիւնը իր համակրելի և արդիւնաւէտ գործունէութեամբ հետզհետէ մեծ ծաւալ է ստանում և արժանի է ամենաբուռն խրախուսանքի։

◆ Այսօր ցերեկով Ժողովրդական Տանը տեղի կունենայ հանդէս Տոլստոյի յիշատակին նուիրված։ Մուտքը ձրի է։

◆ Յովսէփ Թոնունցը վերջնականապէս հրաժարվեց իր թեկնածութիւնը դնել Թիֆլիսի քաղաքային վարչութեան 4-րդ անդամի պաշտօնի համար։ Ձայնաւորների մի խումբ դրականապէս կանգ է առել Զաքարիի վրա։ Միւս կողմից մի ուրիշ խումբ առաջարկում է այժմ չը կատարել 4 րդ անդամի ընտրութիւնը, այլ սպասել մի տարի, երբ կը լրանան ձայնաւորների ներկայ կազմի լիազօրութիւնները։ Այս լուրը լուծում կը ստանայ վաղը դումայի հերթական նիստում։

◆ Շուշու գաւառ. Ներքին Թաղավարդ գիւղից գրում են մեզ, որ այնտեղ, հոկտեմբերի 21-ին, երեկոյեան ժամը 5 և 15 րոպէին զգացվել է ուժեղ երկրաշարժ, որ տեւել է մօտաւորապէս 1 րոպէ։ Սարսափած ժողովուրդը տներից դուրս է եկել։ Եղանակը ձմեռային է և 1 արշինաչափ ձիւն է եկել. գիւղացիք ստիպված են տանը մնալ։

◆ Այսօր երեկոյեան, Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքների հիմնադիրները մասնաւոր խորհրդակցութիւն են ունենալու զանազան հաստատութիւնների ու հիմնարկութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ, յիշեալ դասընթացքներին կից բժշկական ֆակուլտէտ բանալու հարցի մասին։

◆ Դեկտեմբերի 1-ին, Բժշկական Ընկերութեան շէնքում մէջ տեղի կունենայ Բնութեան Սիրահարների Ընկերութեան ընդհանուր հրապարակային ժողովը, ուր կը լինեն մի քանի դասախօսութիւններ։

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութիւնը իր հաշւով տպագրում է Ալանիանիի կազմած թիւրք-վրացական բառգիրքը։

◆ Լրագիրների ասելով յայտնի աւազակ Զելիմ-խանը Վլադիկավկազից մի նամակ է ուղղել Կովկասի Փոխարքային, որի մէջ նա ասում է, թէ պատրաստ է զէնքերը վայր դնել, եթէ ազատութիւն կը տրվի իր ըն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՈԼՍՏՈՅԸ

—

1. Գերեզմանը

Այժմ գիշեր է։ Մութը գիշեր։ Դրսում խաւարն է նստել երկրի ու կեանքի վրա։ Իմ հոգին թափառում է հեռուները և բարձր խաւարի միջից տեսնում է անտառակի բլակի վրա այն հողաթումբը, որի տակ թողինք ու թաղեցինք նրան։ Հաշւեցի ես՝ 7 հատ լորի են կանգնած այն հողակոյտի շուրջը։ Ի՜նչ վատ էին հագնված, ինչ լուռ ու տխուր էին այն լորիները, երբ նրանց էինք յանձնում իրանց մօտ սնված, իրանց մօտից փախած և էլի իրանց քով յաւէրժ մնալու համար եկած այն առիւծ մարդուն։

Հոգ չէ որ լորիները այժմ այդպէս են. կանցնի ձմեռը, կը գայ գարունը և կը հանէ նրանց սգից։ Այն ժամանակ նրանք կանաչ զգեստ կը հագնեն, պար կը բռնեն այն գերեզմանի շուրջը և երգեր կը հիւսեն նրա տակ հանգչող դիւցազնօրդուն։

2 Ինչպէս թաղեցինք նրան

Ա՜խ, զուր էին ուղարկել այն զինված ձիաւորներին՝ մեզ լուռ պահելու համար։ Առանց նրանց օգնութեան էլ մենք մեզ լուռ էինք պահում, բայց ոչ այն լռութեամբ, որը պատմում է հոգու մեռելութեան մասին։ Ձիաւորները այդ հասկացան, մի կողմ կանգնեցին և սկսեցին դիտել, գուցէ և մտածել ու հասկանալ, թէ ո՞ւմ է թաղում այդ հազարաւոր բազմութիւնը։ Գիւղի մարդիկ իրանց ձեռքերի վրա բերին դագաղը և դրին գերեզմանի մօտ։ Մենք չոքեցինք, երբ նրան շիրիմ իջեցրին։ Մենք չոքեցինք, երբ դագաղի տախտակները սկսեցին զգալ թիերի նետած հողի ձայնից։ Մենք չոքեցինք, երբ արդէն պատրաստ էր այն հողաբլուրը։ Մենք էլ լորիների պէս տխուր ու լուռ էինք։ Մենք խօսքեր չը գտանք մեր վիշտը արտայայտելու և լռեցինք, լռութեամբ խօսեցինք։ Եւ ինչ խորհրդաւոր էր այդ լռութիւնը, ինչ շատ բան էր այն ասում մեր հոգուն։ Երանի՜ նրան, որի գերեզմանի մօտ մարդկային լեզուն խօսքեր չէ գտնում հոգու մեծութիւնը պատմելու համար և խօսում է լռութեամբ, ամեն բան պատմող ու ամեն ինչ հասկացնող, զգացնող լռութեամբ։ Այն գերեզմանն էլ այժմ լուռ է, բայց նա իր լռութեամբ խօսում է և կը խօսի յաւէտ՝ ներկայ և գալիք սերունդների հետ անմեռ հոգու, անմեռ խոկումների մասին։ Երանի՜ կենդանի հանգուցեալներին և վա՜յ հանգուցեալ կենդանիներին։

3. Ո՞վ էր նա

Մարդկութիւնը անեզր տիեզերքի մէջ որբ է։ Նախախնամութիւնը նրան ստեղծել ու գցել է տիեզերքի աննշան անկիւններից մէկում, որի անունն է երկիր։ Գցել ու գնացել է՝ ինչպէս մի մայր, որ չը կամենալով տէր ու տիրութիւն անել իր ծնած մանկանը՝ թողել է նրան փողոցի մէջտեղը անտէր, անխնամ։ Մենք դրսում, մենք փողոցում որբ, անխնամ մնացինք։ Ո՞ւր գնանք... Ահա այն հարցը, այն առեղծուածը, որ դարեր շարունակ ծեծել ու ծեծկել է մարդկային հոգին։ Մարդկութեան որդիների մեծ մասը այդ հարցը տալիս է, բայց չէ աշխատում լուծել, չէ կարողանում լուծել։ Շատ քչերն են իրանց հոգու ամբողջ թափով կպչում այդ հարցին և ճգնում նրան որեւէ պատասխան տալու։ Նա ծնվեց և նուիրվեց այդ մեծ առեղծուածի լուծմանը։ Այսօր կարդացի Բրանդէսի մի յօդուածը, որտեղ ասում է, որ Տոլստոյը երբէք չէ ծիծաղում իր գրուածքներում։ Այդ ճիշդ է։ Նա աշխատում է ծիծաղ, երջանկութիւն տալ ամբողջ մարդկութեանը, բայց ինքը չէ ծիծաղում... Եւ ինչպէս կարող է նա ծիծաղել, քանի որ նա ծնել, իր հոգու մէջն է առել մարդկային ամբողջ վիշտը։ Ինչպէս նա կարող է ծիծաղել, քանի որ նրա ամբողջ կեանքը աշխատանք, տանջանք է եղել պատասխանելու այն հարցին, թէ ո՞ւր գնանք։ Շատ քիչ մեծ հոգիներ է տուել մարդկութիւնը՝ մեզ այնքան զարմացնող, այնքան հիացնող որոնելու կարողութեամբ ու անկեղծութեամբ։ Մարդկային կեանքը ներկայումս գաղափարական արդարացում չունի։ Մարդկութիւնը ապրում է առանց նպատակի, առանց կրօնի՝ ոչ գռեհիկ իմաստով առած։ Աննպատակութեան անապատում նպատակի նման մի բան գտել են և ապրում են նրա համար։ Ոսկի կուլտն է, որ լցնում է մարդկանց կեանքի դատարկութիւնը և զբաղեցնում է նրանց։ Անհաւասարութիւն, բռնութիւն, բարքերի անկում, հոգու և մարմնի քայքայում, կարճ տանջանք—ահա ինչ է տալիս մարդկութեանը այդ կուլտը։ Նա եկաւ մեզ մօտ այն պատգամով, որով նրանից առաջ եկել են Բուդդա, Քրիստոս և ուրիշները։ Նա նոր խօսք չասաց տառապող մարդկութեանը, նա միայն ազդու յիշեցրեց այն նպատակի մասին, որը կարող է մարդկանց երջանկութիւն տալ։ Սէրի կրօնը քարոզեց նա մեզ ու գնաց։ Բայց գուցէ աւելի ուղիղ կը լինի, եթէ ասեմ, որ նա քարոզեց հոգու կրօնը։ Նա սէր, խիղճ էր քարոզում, բայց ամենից առաջ նա որոնող է բացարձակ ճշմարտութեան։ Եւ Տոլստոյի նոր խօսքը, եթէ այնպիսին ուզում ենք գտնել նրա ասածների մէջ՝ պէտք է որոնել նրա հոգու անյագ, անկուշտ որոնումների մէջ։ Պէտք է որոնել և հանգիստ չը գտնել, մինչև որ չը գտնվի բացարձակ ճշմարտութիւնը։ Բայց խօսենք պատկերներով։

4. Զանգերի արքան

Մարդկութեան մեծ որդիներին ես կը համեմատէի զանգերի հետ, որոնց ղօղանջը մեզ կանչում է ճշմարտութեան տաճարը։ Երկար դարեր էր, որ չէր ձուլվել նրա նման վիթխարի ու ղօղանջուն զանգ։ Դարերի երկունքը լուծվեց—նոր զանգը, նոր ժամանակների զանգերի արքան, ձուլվեց աւարտվեց և կախվեց երկնակամարից։ Նրա ղօղանջը լսվում է երկրագնդի բոլոր կէտերում՝ յիշեցնելով մարդկութեանը, որ ժամանակ է մոլորութեան ճանապարհից ճշմարտութեան տաճարը գալու և աղօթելու։ Զանգը նրա մահով չընկաւ ու չը մեռաւ։ Նա միայն հեռացաւ, կտրաւ մեր հայեացքից, անցաւ հորիզոնի այն կողմը։ Բայց նրա ղօղանջը լսվում է և կը լսվի երկար դարեր։ Ականջ դրէք ձեր հոգու մէջ հնչվող ձայներին և դուք կը լսէք զանգերի արքայի հուժկու ղօղանջի արձագանքը։ Դեռ շատ սերունդներ կը լսեն այդ ղօղանջը, կը զարմանան և կերթան նրա յետեւից։ Այդ ղօղանջը, թերեւս, մեզ չը բերէ այն տաճարը, որը մենք որոնում ենք, սակայն, գնալով նրա կողմը՝ մենք աւելի ու աւելի կը մօտենանք մեր որոնածին...

5. Արեւը ծագել է

Իմ հայրենի քաղաքի արեւմտեան մասում կայ մի լեռ, որին շատ քիչ անգամ են ամպերը հասնում։ Յիշում եմ մանուկ օրերից։ Երկինքը ծածկված է գորշ ամպերով։ Մենք դաշտում հերկում ենք մեր արտերը և չը գիտենք, թէ արեւը ծագե՞լ է։ Նայում ենք արեւմուտք—այն մեծ սարի կատարը խաղում է արեւի ճառագայթների մէջ, իսկ ամպերը մնացել են լեռան ստորոտում ու լանջերում։ Ամպերից վեր անցած կատարը ասում է ամպերի տակ մնացած դաշտեցիներին. «Արեւը ծագել է»։ Ժամանակակից մարդկութեան երկնակամարը ծածկված է թանձր ամպերով, բայց այնտեղ, հեռւում, երեւում է մի շողշողուն կատար։ Այդ Տոլստոյն է։ Նայելով նրան՝ հասարակ մահկանացուն չէ կարող ցնծուն հրճուանքով չը բացականչել. «Արեւը ծագել է»։ Մարդկութիւնը դեռ վերջնական պատասխան չէ կարող տալ «ո՞ւր գնանք» հարցին, բայց նա չէ կարող չը տեսնել, որ՝ որբութեան օրերի՝ վերջը աւետող նշաններ են երեւում։ Բայց Տոլստոյի նշանակութիւնը լաւ է արտայայտված այն գեղեցիկ խօսքերով, որոնցով Մերեժկովսկին վերջացնում է իր յօդուածը. «Եթէ միւս աշխարհների բնակիչները մեզ հարցնեն, թէ ո՞վ էք տամիքին և, կը վերածվին Թերեքի շրջանի ազգաբնակութեան վերաբերութեամբ ձեռք առած ռեպրեսիաները։

◆ Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ տեղի կունենան հետևեալ ժողովրդական ընթերցումները։ Այսօր տ. Ձաչկեան-Բալանթարեանը հայերէն, ժամը 9½—11 կը կարդայ «Կովկասի գերին»։ Տիկին Նասիձէն վրացերէն, ժամը 11—12 «Թռչունների աշնան թռիչքը»։ Հասակաւորների համար (խնդրըվում է երեխաներին չը տանել) բժ. Կոնդրատիեվը կը կարդայ ռուսերէն ժամը 5—6 «Բուժէշի մասին», բժ. Մխիթարեանը հայերէն, ժամը 6—7 «Սիֆիլիսի» մասին։ Մուտքը ձրի է։

◆ Բաթումում եկած անգլիական շոգենաւի վրա երևան են հանել երկու խոլերայով հիւանդ ճանապարհորդների, որոնցից մէնը մեռել է. շոգենաւը կանգնած է ծովի վրա։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Պարիզի նշանաւոր հրատարակչական ֆիրման՝ Էրնէստ Լըրու (Ernest Leroux) մի քանի ժամանակից ի վեր ձեռնարկել է «Հայկական փոքրիկ մատենադարան» (Petite Bibliothegue Arménienne) անունով մի շարք հրատարակութիւնների, ընդ խմբագրութեամբ հայագէտ Ֆ. Մակլէրի։ Յիշեալ ֆիրման է, որ առաջ հրատարակեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի «Հայոց եկեղեցու պատմութիւնը», նա է, որ հրատարակեց նոյնպէս Ֆ. Մակլէրի 1) «Հայոց պատմիչ Սեբէոսի Հերակլի պատմութիւնը» և 2) «Պարիզի ազգային Մատենադարանի հայ և վրացի ձեռագիրների ցուցակը»։ Այս օրերս նոյն ֆիրման ձեռնարկել է հրատարակելու Մինաս-Չերազի «Nouvelles Orientales» վէպիկները և Շիրվանզադէի մի վէպի թարգմանութիւնը «La Possédée» վերնագրով։ Վերջինս արդէն հրատարակվել է և մենք ստացանք Մակլէրից մի օրինակ։ Թարգմանութիւնը ֆրանսերէն կատարել է Արշակ Չօպանեանը։ Առաջաբանի մէջ, որ գրել է Ֆ. Մակլէր, այն է. ասում «Համեմատաբար կարծում են, որ հայկական գրականութիւնը չափէն կրօնական է, ուստի և նա կարող է հետաքրքրել միայն նրանց, որոնք ցանկանում են ծանօթանալ արևելեան քրիստոնէական լայն գրականութեան այդ ճիւղի հետ։ Սակայն կրօնական կամ եկեղեցական այդ արտադրութիւններից դուրս, հայկական գրականութիւնը դեռ XIX դարից առաջ, թողել է բաւական շահեկանութիւն ունեցող այնպիսի գործեր, որոնք կարող են արժանապէս գնահատվել միայն այն ժամանակ, երբ ձեռագիրների բազմաթիւ հաւաքածուները լոյս կը տեսնեն։ Վերջին դարի հայ բժիշկների գործերը, աշուղների բանաստեղծութիւնները, մեծ պօէմաներ, դիւցազնական լեգենդաներ հետզհետէ հրատարակվել, թարգմանվել և մեկնաբանվել են։ Եւ այդ շրջանում, մենք մի նոր դարագլխի արշալոյսին ենք կանգնած։ Մի օր մենք կը զարմանանք, տեսնելով որ շատ գանձեր թաղված են մնացել, այնքան երկար ժամանակ»։

Ապա Ֆ. Մակլէր, խօսելով Աբգար Յովհաննիսեանի ձեռնարկած գերմաներէն «Հայկական Մատենադարանի» և Արշակ Չօպանեանի «Հայկական Մատենադարանի» մասին, յիշելով նրանց հրատարակութիւնների նկատմամբ՝ կցում է. «Մեզ թւում էր, որ հայկական գրականութեան բաւականաչափ լայնատարած դաշտի մէջ տեղ կարող է բռնել և աւելի մի համեստ եղանակի հրատարակութեան համար, որի մէջ կարելի էր ծանօթացնել այնպիսի աշխատութիւնների հետ, որոնք շահեկանութիւն ներկայացնում են ոչ միայն հայերի համար։ Էրնէստ Լըրուն հասկացաւ այն շահեկանութիւնը և կարևորութիւնը, որ ներկայացնում է այդ տեսակի մի հրատարակութիւն և նա կամեցաւ, մեր խնդրանքի համաձայն, հիմնել մի «Փոքրիկ հայկական Մատենադարան»։

Եւ այդ Մատենադարանի առաջին հրատարակութիւնն է Շիրվանզադէի յիշեալ վէպի թարգմանութիւնը։ Երկրորդը կը լինի Մինաս Չերազինը։

Աջողութիւն ենք ցանկանում Ֆ. Մակլէրի այդ համակրելի ձեռնարկութեան։

Հ. Ա.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Սնունդ և ստամոքսի հիւանդութիւններ», բժ. Գ. Մաղաքեանի, 1910 թ.։

Բժ. Մաղաքեանը մեր երիտասարդ բժիշկների մէջ գեղեցիկ բացառութիւն է կազմում. նա դեռ ուսանողութեան ժամանակից զգացել է, որ ամէն մի դիպլոմաւոր ինտելիգենտ անձ, բացի իր մասնագիտական պարտականութիւնը կատարելուց դէպի հասարակութիւնը, պիտի զգայ իր մէջ ձգտումն բարձրացնելու վերջինիս, թէ մտաւորապէս և թէ բարոյապէս, չը խնայելով իրանից կախուած միջոցները։ Վերոյիշեալ գրքոյկից առաջ մեր ընկերակիցը հրատարակել է 1) «Մայր և երեխայ» 1903-ին, 2) «Բժշկականութիւն և հասարակութիւն» 1904-ին, որոնցից առաջինը սպառված է։

Երբ մեզ մօտ լոյս է տեսնում մի որևիցէ նոր աշխատութիւն, մանաւանդ մասնագիտական բնոյթ ունեցող, անհրաժեշտ է տալ ճշգրիտ և անկողմնակալ գրախօսութիւն, որ թէ հեղինակի և թէ կարդացող հասարակութեան համար շատ կարևոր է։ Վաղուց յայտնի է ֆրանսիական առածը «La critique est facile art est diffcile» ճշմարտութիւնը, բայց և այնպէս քննադատութիւնը մի անհրաժեշտութիւն է և յոյժ կարևոր, եթէ նա հիմնված է անկողմնակալութեան և լուրջ վերաբերմունքի վրա դէպի քննվող առարկան։ Մենք շատ հեռու ենք մեզ քննադատ համարելու բառի ընդարձակ մտքով, բայց մեզ մօտ կայ ձգտումն յայտնել մեր համեստ կարծիքը զուտ գիտնական հիմունքների վրա։ Այդպէս էլ պիտի վերաբերվենք մեր ընկերակցի գրքոյկի քննութեան։ Մեր քննութիւնը աւելի յարմար համարեցինք անել՝ թէ նիւթի և թէ լեզուի, աւելի ճիշտն ասած՝ մասնագիտական տերմինների մասին միատեղ, ցոյց տալով այն երեսները, ուր նկատել ենք, ըստ մեր հասկացողութեան, թերութիւններ։

Առաջին երեսում գրված է. «մարդուս կերակուրը-սնունդը բաղկացած է սպիտակուցից-օսլայից, ճարպից, անօրգանական աղերից և ջրից»։ Բայց յոյժ կարևոր շաքարի մասին ոչ մի խօսք։ Չէ որ շաքարը ամենատարածված սնունդն է մանաւանդ բուսական թագաւորութեան մէջ խաղողի, սեխի, ձմերուկի և անթիւ պտուղների մէջ. վերջապէս օսլան (крахмаль) աւելի հում նիւթ է, համեմատած շաքարի հետ։

Երկրորդ երեսում կաթնի մասում գրված է հետևեալը. «նա պարունակում է՝ ջուր, սպիտ, իւղ, օսլայ (՞) և այլն»։ Այդ որտեղից է վերցրել մեր ընկերակիցը, որ կաթնի մէջ կայ օսլա (крахмаль)։ Չէ որ այդ ամենակարևոր սնունդը պարունակում է՝ ջուր, սպիտ, իւղ և շաքար, կանանց կաթի մէջ 6—7%, իսկ կովի 4—9%։ Եթէ հեղինակը օսլան ընդունել է շաքարի տեղ, դա անկարելի է, որովհետև օսլան դեռ պիտի ենթարկվի փոփոխութեան, որպէսզի դառնայ շաքար։ Եթէ կաթի մէջ օսլայ լինի, երեխան չէ կարող նրան մարսել սկզբի ամիսներում, քանի որ դեռ նրա թքարեր գեղձերը համարեա չեն գործում։ Կանանց կաթնի բաղադրութիւնը հետևեալն է. սպիտ 10%, իւղ 35%, շաքար 60% և աղեր 2%*)։ Ապա ուրեմն կաթի մէջ վնտռել և «օսլայ» մեծ սխալմունք է։ Ութերորդ երեսում зондъ թարգմանված է «ռետինէ խողովակ», որ թարգմանաբար նշանակում է՝ резиновая трубка; պէտք է ասել «խորաչափ» կամ ուղղակի զոնդ, բացատրելով վերջի նշանակութիւնը։

9-րդ երեսում ըստ մարսողութեան աստիճանի «հում ձուն» և «ձուաձեղը» համահաւասար է նշանակված։ Յայտնի է և հասկանալի, որ վերջինը՝ համեմատաբար դժուարամարս է հէնց նրանով, որ նրա մէջ կայ աւելորդ իւղ, քան թէ հում ձուի մէջ։

11-րդ երեսում գրված է. «Ծուխ դրած» (копченый). շատ անյաջող թարգմանութիւն է. պիտի գրած՝ «ծխամած» (տես Բառ. Լուսինեանի)։

Գրքի 13-րդ երեսում գրված է. «Շիրդանի մակարդից», երբ թարգմանութիւն сычужный ферментъ խօսքերի։ Հայերէն կարելի է ասել խախացոց (նշանակում է որոճացող կենդանիների IV ստամոքս), իսկ «շըրդէն» թուրքերէն է. (տես Բառ. Լուսինեանի և Խալաթեանցի)։

Նոյն երեսում ստամոքսի մասին ասված է. «ամենազգայուն անդը... կերակուրը դէպի աղիքներ շարժելու մէջ է»։ Ճշմարիտ է, կան դէպքեր, երբ ամբողջ ստամոքսը հեռացվել է (désestomaqué) օպերացիայի միջոցով, բայց դրանք բացառիկ դէպքեր են, ուստի ստամոքսի դերը մարսողութեան գործում շատ և շատ մեծ է. նրա նշանակութիւնը այդքան նուազեցնել չէ կարելի։ Նա վերին աստիճանի կարևոր է և կարելի է ասել խելացիօրէն գործող օրգան է, ինչպէս ապացուցել է գիտնականօրէն հռչակաւոր բնախօս Պաւլովը։ Յայտնի ֆրանսիացի Էմիլ Գոտիէն (Emile Gautier) «La Revue» ամսագրի № 2, 1903, տպել էր մի յօդուած հետևեալ վերնագրով La philosophie de la digestion մարսողութեան փիլիսոփայութիւնը, որ գուցէ մենք տպագրենք հայերէն լեզուով, ուր ինչպէս ասած մարսողութեան մէջ մի տեսակ գիտակցութիւն և նպատակայարմարութիւն է նկատվում՝ հոգեբանական բնոյթ ունեցող։ Մեր յարգելի հեղինակը, ստամոքսի հիւանդութիւններին անցնելուց առաջ՝ պէտք է՝ նախ և առաջ՝ մարսողութեան գործարանների բնախօսութեան մասին խօսէր, օգտվելով վերոյիշեալ Պաւլովի ամենահետաքրքիր աշխատութիւնից **), որոնց համար նա ստացել է Նոբէլի պրէմիան։ Ոչ մասնագէտ կարդացողի համար՝ բժշկականութեան բնախօսական և առողջաբանական մասը՝ աւելի կարևոր է, քան զուտ բժշկական, որպիսին տեսնում ենք մեր ընկերակցի գրքոյկի մէջ։

Եւ առհասարակ՝ գրքոյկը աւելի մասնագիտական բնոյթ է կրում իր վրա, որ, ի հարկէ, կարող է մեծ արգելք լինել նրա ցանկալի տարածման։

Երես 16. «Գիտութեան մէջ ընդունված այն փակտորը, թէ հիւանդութեան տեղը բջիջն է (клѣтка), այսինքն թէ հիւանդութեան ժամանակ այս կամ այն գործարանը ենթարկվում է զանազան փոփոխութիւնների անատոմիական տեսակէտից, մասամբ միայն վերաբերում է ստամոքսային հիւանդութիւններին։

Ստամոքսը եթէ «օբիէկտիվ և թէ սուբիէկտիվ կերպով հիւանդ է լինում, բայց օրգանական փոփոխութիւնների չէ ենթարկվում»... «որոնք նշմարելի լինեն գիտութեան այժմեան միջոցների շնորհիւ. նոյնն են աղիքների և սրտի վերաբերմամբ»։

Հեղինակն ակնարկում է հանճարաւոր հանգուցեալ Վիրխովի բջիջային ախտաբանութեան տեսութիւնը (теорія целиулярной патологіи), ըստ որում ախտաբանական գործողութիւնները (процессы) բացատրվում են բջիջների կենսագործունէութեան (личная дѣятельность) փոփոխութեամբ, այնպէս որ ամէն ինչ բջիջներից է կախված։ Մեր յարգելի կօլլէգի բացատրութիւնը, ըստ մեր կարծեաց՝ շատ մութն է, անմատչելի կարդացողին և երկրորդ՝ նրա այն կարծիքը, թէ ստամոքսի հիւանդութիւնների վերաբերմամբ բջիջային տեսութիւնը չէ արդարանում, թոյլ ենք տալիս մեզ առարկելու, որ սխալ է։

Թէ որ ստամոքսի կատառի ժամանակ (երևի մեր ընկերակցի ասելիքը դրա մասին է) բորբոքվում է լորձաթաղանթը իր բջիջներով և գեղձերով և եթէ նա յարատև է լինում, մինչև անգամ նա ենթարկվում է թոշնութեան (атрофія)։ Իսկ միւս հիւանդութիւնները ստամոքսի կլոր խոց, քաղցկեղ և այլ խոշոր օրգանիկական փոփոխութիւններ են ունենում։ Ապա ուրեմն Վիրխովի տեսութիւնը միանգամայն իրականանում է և ստամոքսի աղիքների և սրտի հիւանդութիւնների ժամանակ, ի բաց առեալ ջղային դէպքերը։

(Կը շարունակվի)

---

*) Краткій учебникъ, Филатовъ, стр. 16.

**) Лекціи о работѣ пищеварительн. органовъ, 1897 г., проф. И. П. Павловъ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թիֆլիսում աջողութիւն ունի «Ժուլիկ» պիէսը։ Հասարակութիւնը յաճախում է նրա ներկայացումները։

Պոտապենկոյի այդ նոր դրամատիկական աշխատութեան աջողութիւնը բացատրել կարելի է նրա բնական մի քանի արժանաւորութիւններով և դերասանական խմբերի բաւարար խաղով։

Դրամատիզմը խոր չէ և վճռելի, բայց տըպաւորութիւն գործող է։

Պիէսի հերոս է Կրօմբերգի մի անձ է, որ զեղծումներ է գործել անտառապահութեան մէջ և հօթ ամիս բանտ նստել։ Դուրս գալով բանտից, նա իբրև շատ գործունեայ մարդ, ձեռք է զարկում մի մեծ գործի, այն է շահագործելու իրանց քաղաքի հանքային ջրերը և աջողացնում է դրամագլուխներ հաւաքել և մի առաջնակարգ բուժավայր հիմնել։ Այդպիսի խոշոր գործից յետոյ բոլոր հասարակութիւնը ոչ միայն հաշտվում է նրա անձի, իբրև նախկին յանցագործի հետ, այլ և ընտրում է նրան պատուաւոր անդամ իրանց ձեռնարկութեան։

Պիէսի հերոսը կարծես ուզում է ասել, որ յանցաւորութիւնը պախարակելի մի բան չէ, այլ և երբեմն շատ օգտաւէտ։

Դա շատ ծանծաղ մի թեզ է, այդպիսի բարոյական սկզբունք հռչակելու համար։

Ոչինչ զարմանալի մի բան չը կայ, եթէ եռանդուն, աշխատասէր, որոշ աստիճան շնորք ունեցող մի յանցաւոր անձ աւելի խոշոր գործ է կատարում, քան բարեհոգի և ազնուասիրտ ծոյլերի ու անընդունակների մի բազմութիւն։ Դա բնական է և հասկանալի։

Բայց այդտեղ յանցանքը չէ բեղմնաւոր արդիւնքներ առաջացնողը, այլ շնորհալի անձի աշխատանքը եռանդը և գործելու ընդունակութիւնը։

Եւ եթէ երբեմն ինքը յանցանքը նպաստաւոր դեր էլ է կատարում, դա ոչ թէ յանցանքի էութեան և բարոյական ոյժի պատճառով է, այլ այն, որ ինքը միջավայրը ճահճային է, փչացած և չէ նպաստում մաքուր ու ազնիւ գործունէութեան։

Պիէսի հերոսները այդպիսի մի բան կարող էին ասել հասարակութեան. «Պարոններ, եղէք գործունեայ, եռանդուն և ձեռնարկու ոգու տէր անձեր, այդպէս կը գայ կլանելու ձեզ աւելի ուժեղ և տաղանդաւոր մարդը թէկուզ յանցանքներով օժտված»։

Կրօմբերգու դեր կատարող Մուրօմցևը խաղում է մտածված, աշխուժով և մեծապէս նպաստում է պիէսի բարեաջող տպաւորութեան։ Գեղեցիկ է անսամբլը։ Միւս դերակատարներից աչքի է ընկնում Պօկրովսկին։ Կանացի դերերը լաւ չեն մշակված, ուստի գոհունակ դերերից չեն խաղացողների համար։

Սիրող

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Վաղը Արտիստական Թատրոնում Հայոց Դրամատիկական Ընկերութեան դերասանական խումբը կը ներկայացնէ Ֆուլդի յայտնի «Ցիմար» պիէսը։

◆ Թիֆլիսում առաջիկայ շաբաթ Արքունական Թատրոնում օպերային խումբը առաջին անգամ կը ներկայացնէ «Դաւաճանութիւն» օպերան, որի հեղինակն է Թիֆլիսի երաժշտական դպրոցի նախկին վերատեսուչ Իպօլիտով-Իվանովը։ Անտոն Էյխենվալդը հրաւիրել է Իվանովին գալ Թիֆլիս և ղեկավարել իր օպերան, որ խոստանում է հետաքրքրական լինել։ Նիւթը «Դաւաճանութիւն» պիէսի նիւթն է. օպերայի մէջ կան մի քանի գեղեցիկ կտորներ, արևելեան եղանակով ու ոգով շարադրված։ Օպերայի համար պատրաստվում են նոր դեկորացիաներ։

◆ Այսօր, Բօրսայի դահլիճում Վրայրի խումբը կը ներկայացնէ «Դօն-Գրիգորիօ» 3 գործ. կօմէդիան և Փառնակէսի նոր պիէսը «Դատախազութիւն» անունով։

◆ Միքայէլ Մանուէլեան գրել է մի նոր պիէս «Ոստայն» անունով։

◆ Վաղը Զուբալովեան Ժողովրդական Տանը ռուս երաժշտական սիրողների խումբը կը խաղայ «Ռուսալկա» օպերան։ Դեկտեմբերի 11-ին միևնոյն տեղում կը տըրվի «Սէվիլեան Սափրիչ» օպերան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վախճանվեց Պետական Խորհրդի անդամ յայտնի պրոֆեսոր իրաւաբան Սերգէեվիչը։

Խոլերայով հիւանդ մնում են 9 հոգի.

Գիւղատնտեսական խորհուրդը բարձր գիւղատնտեսական դպրոց բանալու համար երկրորդ հերթին դրեց Սամարան Վորոնեժից, Տոմսկից և Կազանից յետոյ։ Նաև անհրաժեշտ ճանաչվեց գիւղատնտեսական դպրոցներ հաստատել Եկատերինոսլաւում, Եկատերինբուրգում և Սարատովում։

Մինիստրների խորհուրդը հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչին թոյլ տուեց առաջարկութիւն անել Պետական Խորհրդի երկրորդ դեպարտամենտին Սիբիրում 135,000 դեսեատին արքունի հողեր մասնաւոր անձանց վաճառելու մասին։

ՄՈՍԿՎԱ։ Հանդիսաւորապէս տօնվեց Ռուս Երաժշտական Ընկերութեան Մոսկվայի բաժանմունքի յիսնամեակը։ Շնորհաւորանքներ ստացվեցին Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչից, Մեծ Իշխանուհի Ելիզավէտա Ֆէօդորովնայից, պրինցուհի Ելենա Գէորգիէվնա Սակսէն-Ալտենբուրգսկայայից, գլխաւոր վարչութիւնից և բազմաթիւ ուղերձներ և հեռագիրներ։

ԿԱԶԱՆ։ Նահանգական դատարանը «Казанскій Телеграфъ»-ի խմբագրին դատապարտեց պրոֆեսոր Իվանովսկիին վիրաւորելու համար կէս տարով բանտարկութեան։

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՍԿ։ Իւլևկա գիւղում 1½ ժամ հրացանաձգութիւն տեղի ունեցաւ աւազակախմբի և ոստիկանների միջև։

դուք, մենք, ցոյց տալով Տոլստոյին՝ կամենք—ահա մենք»։

Փօղոս Աբէլեան

Նոյեմբերի
Մոսկվա

ԱՐՑՈՒՆՔԻ ՀՈՎՏՈՒՄ

(Ստ. Պշիբըշեվսկուց)

Տխրութեան և տառապանքի երգը. այդ թախիծն էր, որ ես լսեցի քո ձայնի մէջ։

Իմ առաջ դժգոյն-կապոյտ, տապից սևացող հեռուն է ձգված։

Արևը իր ճառագայթներով այրում է երկիրը, չորացնում կանաչը ու տերևները, միլիարդաւոր ծփող, ոստնող բոցեր անդրադառնում են լճի մէջ, իսկ կաղամախին իր սուր գագաթով դէպի երկնային լազուրն է բարձրանում.

Իմ աչքերը թափառում են կապուտաւուն հեռաւորութեան, երերվող, արևի մինչև սպիտակելը կարմրած տաք ճառագայթների մէջ։

Այդ երերումն ու անմիտ արևի տապը երբեմն տեսել եմ ես քո աչքերի շուրջը, երբ դու հպվում էիր ինձ մեր մարմինների խանդոտ միութեան մէջ,

Այնտեղ, իմ առաջ ձգված է այն պատկերը, որը դու սիրում էիր. լայն անապատը, ծածկված քօլերով, դեղնած խոտը, չորացած կանաչը... Եղեգներով ծածկված փոքրիկ ճահիճը, երեկոյեան աղջամուղջի մէջ.. Ուռենու չոր ճիւղերն են կախված կեղտոտ ջրի վրա, իսկ այնտեղ մառախլապատ հեռաւորութեան մէջ մի կիսաւեր խրճիթ է երևում։

Եւ անապատների վիշտը, մռայլ աշունը, անապատի դեղնած խոտերի անընդգրկելի տրտմութիւնն ու թախիծը՝ Դու ես։

Եւ տեսնում եմ ես երկինքը, ինչպէս վառվռում է նա իր ամբողջ փայլով։ Ոլորվում են ծիածանային ամպերը, հալված ոսկու հեղեղը ձուլվում է հորիզոնում, մայր մտնող արևը փռեց արնագոյն կարմրութիւն, իսկ արևմուտքից արևելք կրակի և շիկակարմիր կատաղի ջրվէժն է բարձրանում։ Կամաց-կամաց հանգչում են երկուսն էլ և միայն երկնքի հսկայական ճակատի վրա արնագոյն լայն վէրքն է երախը բաց արել։

Նայում եմ երկնքին, տապ օրվայ հանգչելուն։

Եւ վէրքը աճում է, տարածվում է մութ լազուրի մէջ, դառնում է մակարդված արեան յորձանք, աւելի խոր ու խորն է ներաճում երկնքում երկրի սև ստուերը. վերջին ճառագայթների երերուն անդրադարձումով քայքայված, մինչև վերջապէս ամէն ինչ կորչում և հանգչում է գիշերվայ ծանր ու սև ծածկոցի տակ։

Եւ արևմուտքի արտացոլումը, արնագոյն կարմրութիւնը մութ լազուրում, փայլն ու հանգչումը՝ Դու ես։

Ու մի երգ եմ լսում. մռայլ, խորը ձայնանիշ, ապա լոյսի կապտաւուն շերտեր։ Նա լողում է հանդարտ ու վեհօրէն, ինչպէս լեռնային վտակը, պատված երկու կողմից երկնածածկ մերկ ժայռերով։

Եւ որպէս կայծակ սողում է կրքոտ ցանկութիւնների, պագշոտ ծիծաղի օձը և բոցավառվում է գոհացումի ճիչի մէջ։

Օ՜, քո աչքերից միայն մէկ անգամ չեն սողացել այդ օձերը սրտիս խաղաղ անկիւններում, փաթաթել թովիչ փաղաքշանքների ցանցերում, հպվել են նրանց քաղցր խոնջութեամբ, լցնելով կրակի մէջ հոգեկան ցանկութիւններ։ Քեզ, միայն քեզ ամբողջ ձևերով մտքերով և զգացումներով վերստեղծեց իմ հոգին։ Դու կերտեցիր դրա համաձայն այն ամէնը, ինչ միայն գոյութիւն ունի, և ես քոնը եղայ։

Դո՛ւ միայն իմ երգերի ձեն էիր, դու իմ տանջանքի և ցանկութիւնների գիծն էիր, դու իմ հոգու ծաղիկը, ձայնը ու հոտն էիր և ես պէտք է սիրէի քեզ։ Դեռ առաջ, նախքան քեզ առաջին անգամ տեսնելը, դու արդէն իմ մէջն էիր։ Դեռ առաջ, մինչ առաջին անգամ հպեցի քեզ իմ սրտին, դու իմ երգերումն էիր և վառվում էիր իմ գոյների փայլով, և, որպէս երեկոյեան վերջալոյս, դու խաղաղացրիր իմ հոգու թախիծը, կուրացրիր ինձ քո աչքերի փայլով և իմ կեանքի թելերից քո սպիտակ ձեռքերով հիւսեցիր անձկալի դաշտերի համար անսահման մտքեր։

Եւ ես սիրում եմ քեզ։ Սիրում եմ որպէս իմ արուեստը, որպէս ամբողջապէս իմ անվախճան անցեալը, որպէս իմ մայրենի երկրի շնչառութիւնը, որպէս մտածումի թմրութիւնը ու հրացումը կաթօլիկական եկեղեցում... Դու իմ գարունն ու հզօրութեան պերճ ծաղիկն էիր, առաւօտեան այգի խաղաղ նախազգացումն ու առաջ ընթացող օրվայ թրթռուն անհանգստութիւնն էիր։

Սիրում եմ քեզ նոյնպէս, որովհետև դու տուեցիր ինձ տանջանք և վիշտ. վիշտ, որը առաջացնում է ստեղծագործական միտք, պարզում է ձեռքը Աստծուն, ստիպում է ուղեղին մաշվել գիտութեան ծարաւով։ Տուեցիր ինձ իրականութեան ճմլող վիշտը, յաւիտենական անհանգստութիւնն ու բաւականութիւնը։

Ես մոռացայ քեզ։ Հանգաւ իմ աչքերում քո փարթամ մարմնի փայլը, հանգստացան ցանկութիւնները։ Մնաց միայն այն, որի համար պապակում, փաղաքշում էի քեզ և որով հիւծվում էր իմ հոգին, վիշտը։

Վիշտը։

—

Գլուխդ պատած է գունատված ծաղիկների պսակով, նման սև արեգակներից կազմված թագի, իսկ դէմքիդ երևում է հանգած աստղերի վիշտը։

Ինչու՞ դու դարձար իմ չըրիմը, ինչու՞ քո վառվռուն երգերը, որոնցով ուրիշներին գրաւում ես դէպի գեղեցկութեան անըմբռնելի աշխարհը, հնչվում են իմ սրտում որպէս ագռաւների կռկռոցները, լի չար նախազգացումներով... Ինչու՞ կարմիր ջահերը, որոնցով դու ուրիշներին երջանկութեան ճանապարհն ես լուսաւորում, շրջափակել են իմ մահիճը, որպէս յուղարկաւորութեան կերոններ...

Դու իմ եղբայրների համար Աստուծոյ խօսքն էիր, որը ոչնչից ստեղծեց աշխարհը, դու նրանց համար Ադամի կողն էիր, որը թաքցնում է իր մէջ սուրբ հրաշալիքներ, դու նրանց համար յաւիտենական, անսահման հզօր էիր, և միայն իմ գլխիս մխեցիր դափնեայ պսակի սուր փշերը։

Դու՛ տառապանքը, բարձր գեղեցկութիւնն ես։

Դու՛ վիշտ ես։

—

Ես տեսնում եմ քեզ։

Գլուխդ պատած է հազարաւոր կայծակներից կազմված պսակով, զօրաւոր հողմը խառնել է մազերդ և յուսահատութեան ու երջանկութեան ամբողջ յաւիտենականութիւնը սարսափելի մրրիկի նման փոթորկվում է քո սրտում։

Դու լողում ես անմիտ ուժերի ծիածաններում, իսկ քո կամքը նման է նրանց պըճպճացող անդունդին։

Օ՜, տուր ինձ այն ակկորդը, որը ընդգըրկէր քո ողջ զօրեղութիւնը։ Տուր ինձ այն ամենազօր բառը, այն առաջին ստեղծագործութեան «Եղիցին», որով կարող լինէի արտայայտել քեզ ամբողջովին։

—

Մեռած արեգակի սառը փայլում հանգչում է քո դէմքը... Գլուխդ պատած է գունաւված ծաղիկների պսակով... Իմ անզօրութեան, փխրուն, մարգարտեայ խեցիում լողում ես դու դէպի մշտական տանջանքների ու անուժութեան խաւար հեռաւորութիւնը։

Դու՛ սարսափելի, բարձր գեղեցկութիւնն ես։

Դու՛ վիշտն ես։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

սպանվեց ուսադակապետը: Ձերբակալվեցին 15 հոգի. մահացու վիրաւորվեց մի պահակ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Մոսկվա.—Ոսկու-Ջօնին: Ձեր վերջին թղթակցութիւնը չէ կարող տպվել մեզանից անկախ պատճառներով: Այդ թեմայի մասին յօդուածներ մի գրէք:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ.

ԷՊԻԼԷՊՍԻԱ

Աւելի ծանր, մինչև այժմ անբուժելի հիւանդութիւնների դէմ կռուելու ասպարէզում խոշոր աջողութիւններ են ձեռք բերվում շնորհիւ յայտնի բժիշկների և բնագէտների անխոնջ աշխատանքների և գիւտերի. օրինակի համար՝ վերջերս պրօֆ. Էրլիխը յայտարարեց իր սեփական գիւտի մասին: Միայն էպիլէպսիան—բոլոր հիւանդութիւններից ամենայամառ այդ հիւանդութիւնը—մինչև այժմ չէր ենթարկվում բժշկութեան: Այժմ այստեղ էլ կարելի է նկատել յեղաշրջում դէպի լաւը: Շնորհիւ երկարամեայ ջանքերի՝ Բուդապէշտի բժիշկ Ալէքսանդր Բ. Սաբօյին աջողվել է գտնել էպիլէպսիայի բժշկութեան միջոցը, որի հետևանքները միանգամայն զարմանալի են և գիւտն անողը) յայտնի է դարձել այդ հիւանդութիւնը բուժելու շնորհիւ: Դօկտոր Սաբօն (Budapest V, Grosse Kronengasse, 18.) սիրով պատասխանում է (նոյնպէս և ռուսերէն) ամեն մի հարցմունքին՝ ուղարկված հիւանդների կամ նրանց ազգականների կողմից:

(M. 370298) 1310. 1—1

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինուորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ:
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տելէֆօն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ:

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.:

ՈՒԿԼԱԴՆԻԿՕՎ Ի. Օ.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.:

ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.:

ՌԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ. ցեր.:

ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.:

ԽԱՏԻՍՕՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշ. օրերից:

ՆՕՎԻՑԿԻՅ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 1—2 ժ.:

ՍԱՐԱՓ—ներքին և երեխայոց հիւ., ցեր. 12—1 ժ.:

ՏԷՏՐԱՁԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.:

ԱՍՊԻՍՕՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2 ը ցեր.:

ԿԻՆ ԲԺ. ԻՈՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.,

ՎԵՍԵԼՕՎԶՕՐՕՎ Ն. Ն.—խիրուրգ. հիւ.: ամեն օր՝ ցեր. ժամը 2—3-ը:

ՋՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրոտէրապիա., ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 11½—12½-ը:

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ Ա.—սիֆիլիս, վեներական և կաշուի հիւ. ամեն օր՝ 9½—10½ ժ. առ.:

ՓՕՆԴՕԵՎ—ջղային հիւ. և էլեքտրոտէրապիա. ամեն օր, ժամը 2—3-ը:

Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստում, անալիզ, հիպնոզ, ատամների և ծառաների քննութիւն—առանձին վճարով: Սիֆիլիսի վերաբերմամբ, արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի:

(կ.) 356. 100—62

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի տօնական օրերից

ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Գ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Գ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ի. Ց. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպէրացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

103. 0—129

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ:

Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների)
5—7 ժ. երեկ. (ընդհանուր)

Միքայէլեան փող., № 36. Տելէֆօն № 388.
(ե.հ.կ.) 909. 100—49

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող. № 8
(կ. հ.) 564. 100—65

ԲԺԻՇԿ

Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Ականջի, քթի, բկի, կոկորդի հիւանդութիւններ,
Ընդունելութիւնը (Առաւօտեան 9—1 ժամը.
(Երեկոյեան 5—7 ժամը.
Վելիամինօվսկայա փ. № 13, տ. Սէյլանօվի, 3-րդ գիմնազիայի կողքին:
(օ. մ.) 1227. 100—14

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից՝ Պարիզում:
Ընդունելութիւն (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39.
(օ. մ.) 1179. 100—34

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների:
Ընդունելութիւնը ամեն օր { 12½—2 ժ. ցերեկվա
5—7 ժ. երեկոյեան
Կանանց համար՝ 2—3 ժ. ց.
Հասցէն { Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33.
Сололаки, уголъ Бебутовской и Паскевича, 33.
(հ. ու. կ.) 1134. 100—39

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր { Առաւօտ. ժ. 9—12
Երեկոյ. ժ. 5—7
(ե.հ.կ.) 1254. 100—9

ՖԵԼԴՇԷՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ

ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Կատարում է սրսկումներ, վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втиранie) և այլն: Բժշկութիւն տղամարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի: Մասսաժ էլեքտրական և ձեռքով: Բժշկական մարմնամարզութիւն: Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների: Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր: Չքաւորներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը: Վօրօնցօվի արձանի մօտ,
Семеновская ул. № 9.
(կ. հ.) 913. 50—32

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
«ՀԱՍԿԵՐ» ամսագրի № 11, Նոյեմբեր.
Բովանդակութիւն.

1) Լէվ Տօլստոյ (պատկեր), 2) Պառաւ ձին, Թարգմ. Յովհ. Թումանեան, 3) Ծիծեռնակի գալուստը, Ղ. Աղայեան, 4) Սոխակի վէրջը (ժողովրդ.), կազմ. Յովհ. Թումանեան, 5) Կի-կի-լի-կի... աքլորն եմ (նոր հէքիաթ), Աթ. Խնկոյեան, 6) Իմ ծաղիկները, Մն. Թաւաքալեան, 7) Ջէ որ նա գեղեցիկ էր, Մն. Թաւաքալեան, 8) Ամառվայ գիշերով (Ալլէգրօյից), Թարգմ. Յովհ. Թումանեան, 9) Բարեկենդանը (հէքիաթ). Յովհ. Թումանեան. 10) Իմ կեանքից (կը շարունակվի), Շիրվանզադէ, 11) Աշուն, Գ. Մեսեան, 12) Խելար իմաստուն (Պղնձէ քաղաքի զրոյցներից), Մարգար, 13) Զափարածիտ թագաւորը (աւանդ.), Ար. Պայազատ, 14) Բարեսիրտ Գոդիաթը (կը շարուն.), Թարգմ. Յ. Մխիթարեան. 15) Լէվ Տօլստոյ, Յ. Թումանեան, 16) Այսօր վայ տխուր նամակը, Մն. Թաւաքալեան: Անեկդոտ: Հանելուկ:

1325. 1—1

„ԳԻՐ" ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ վաճառվում են ի միջի այլոց հետևեալ գրքերը.

Արեւելքի քարտէզ քաթանի վրա, 3 ր.
Մաղաքեան, Սնունդ և ստամոքսի հիւանդութիւններ, 15 կ.
Ուղեցոյց գիւղացի կօօպերատօրի, 25 կ.
Աբեղեան Մ. Հայրենագիտութեան ուսուցումը, 20 կ.
Բաշինջաղեան. Խաղողի հիւանդութիւնները և նրանց բժշկելը, 5 կ.
Ամիչիս. Սիրտ, Աշակերտի յիշատակարանը, 1 ր. 50 կ.
Իրվինգ. Մահմէդի կեանքը, 1 ր. 20 կ.
Շիլլեր. Աւազակներ, 50 կ.
Տէրտէրեան. Վահան Տէրեան. 25 կ.
Սմայլս. Ինքնօգնութիւն, 1 ր. 50 կ.
» Բնաւորութիւն, 1 ր. 50 կ.
Ղազարեան. Հայաստանը և հայերը ըստ Քսենոֆոնի, 12 կ.
Ղազարեան Գ. Մայրենի լեզուի ուսուցումը, 25 կ.
Արամասեան. Հողի պարարտացումը, 15 կ.
» Բամբակը և նրա մշակութիւնը, 40 կ.
Ղազարեան. Արշակ երկրորդ, 30 կ.
Յարութիւնեան Խ. 1500 տարի առաջ, 20 կ.

Դիմել՝ Тифлисъ, Вельяминовская ул. № 7, Книжный магазинъ „Гиръ".
1319. 1—1

Լոյս տեսաւ
Մ. ՉՄՇԿԵԱՆԻ

1911 Թ. „ԾՈՑԻ" ՕՐԱՑՈՅՑԸ

որը վաճառվում է Կովկասի քաղաքների յայտնի գրավաճառանոցներում և Թղթեղէնի խանութներում: Մեծ քանակութեամբ գնողները դիմում են հետևեալ հասցէով. Тифлисъ. Габаевская № 5, Макару Чимишкяну. Մակար Չմշկեան:
(կ. ե.) 1300. 10—3

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Լաւ վարելահողեր, արօտատեղիներ և անտառ:

Հաղորդակցութիւնը երկաթուղով և խճուղիով: Թիֆլիսից 40 վերստ հեռաւորութեան վրա՝ Մչադիժվարի—1517 դես., Էրնիսի—19 դես: 50 վերստ հեռաւորութեան՝ Փախրալօ—804 դես., Սարքինէթի—1000 դես. երկաթի հարուստ հանքով, անտառ—1830 դես. (կաղնի, բոխի և այլ ծառեր): Կասպիս կայարանից 12 վեր. հեռ.՝ Օկամի—118 դես. և Բէնիսի—20 դես.: Գօրից 10 վերստ հեռ.՝ Ձէրտուլի—208 դես.: Այդ բոլոր հողերը կարելի է ձեռք բերել բանկի միջոցով՝ վճարելով մաս-մաս՝ արժէքի մնացորդը—զանազանութիւնը: Կանխիկ դրամով գնողներին ձեռնտու պայմաններ: Պատճէնները և մակարդակներն ուղարկում եմ. կարելի է տեսնել և Թիֆլիսի նոտարների մօտ: Հասցէն՝ С.-Петербургъ, Мойка 81. Кн. Багратіону.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ

ԲԱՄԲԱԿԸ
ԵՒ
ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Գործնական եւ լրիւ ձեռնարկ բամբակագործութեամբ պարապողների համար:
20 նկարներով
Գինն է 40 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ", կամ «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և Բագու „Сотрудникъ"-ին:
(ե. կ.) 1233. 10—9

ՊԱՏՐԱՍՏԻ ՇՐՋԱԶԳԵՍՏ
2 ՌՈՒԲ. 45 ԿՈՊ.

Կանացի ՊԱՏՐԱՍՏԻ շրջազգեստ (իւրկա) գեղեցիկ, տամուր, նորաձոյն նկարներով տրիկօյից, վերջին տարազով կարված, ամեն տեսակ գոյների, ուղարկվում է պօստով առանց կանխավճարի՝ վերադիր վճարով: Շրջազգեստ ամենալաւ կտորից և գեղեցիկ զարդարված—2 ր. 75 կ. և 3 25 կ.: Ճանապարհածախսի համար աւել հաշվում է 55 կ.: 3 շրջազգեստ միասին բերել տուողը ճանապարհածախք չէ վճարում: Պատուէր ուղարկելուց խնդրում ենք ցոյց տալ երկարութիւնը և գօտու լայնութիւնը: Եթէ չը հաւանվի՝ փողը վերադարձնում ենք: Հասցէագրել՝ Торгов. Дому ЛЬВА РУБАШКИНА.
ЛОДЗЬ—257.
(կ.) (B. 89293) 1284. 13—2

ՏՐԻՊԵՐԸ ԲԺՇԿԵԼԻ Է

Լոյս տեսաւ և ծախվում է
ՏՂԱՄԱՐԴԻ ՏՐԻՊԵՐԸ
ԵՒ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Կազմեց մէդից. ֆէլդշ. Ա. ԵՍԱՅԵԱՆ: Նկարներով: Գինը 20 կօպ. Պարունակում է մանրամասն խորհուրդներ և բէցէպտներ տրիպէրից բժշկվելու: Անհրաժեշտ գիրք է բոլոր չափահասների համար: Ծախվում է նաև նոյն հեղինակի «Տղամարդի սեռական կեանքը». գինը 30 կ: Մնացել են սակաւաթիւ օրինակներ: Դիմել Թիֆլիս՝ «Գուտտենբէրգ», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և հեղինակին՝ Семеновская ул. № 9.
(օ. մ.) 1294. 5—4

Золотая медаль Лондонъ 1893 г.

ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКЪ!
ПРОВИЗОРА
Г.Ф. ЮРГЕНСЪ
БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО
ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ И ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.
БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
1/1 КУС. 50 К. 1/2 КУС. 30 К.

Главн. складъ у Г. Ф. Юргенсъ, Москва

(M. 4375) 21. 24—20

Լ. Լալէթի լաբօրատօրիայի Օրլէան քաղաքում (ՖՐԱՆՍԻԱ)

ԵՕԴԻՐԻՆ ԲԺՇԿԱՊԵՏ ԴԵՇԱՆԻ

(Iodhyrine du d-r Deschamp)
ՇԱՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻՋՈՑ

ՉԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ

որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետևանքներով: Բժշկապետ Դէշանի Եօդիրին՝ նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. Նրա աջող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում:
Բժշկապետ Դէշանի Եօդիրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար:
Հեռացնում է չաղութիւնը աստիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում:
Արկղիկի գինը, որ պարունակում է 60 դեղհատներ, արժէ 4 ր. 25 կօպ.:
Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում:
Ընդհանուր ներկայացուցչութիւնը Ռուսաստանում
Торговый Домъ ЛЮКСЕМБУРГЪ и К-о, Варшава, Журавья. 40.
(8,18,28) (B. 61952) 1084. 8—8

ԲԱՑՎԱԾ Է 1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՀԱՍԿԵՐ"

(Եօթերորդ տարի)
Մանկական պատկերազարդ ամսագիր
Անմիջական ղեկավարութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և մշտական աշխատակցութեամբ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ:

1911 թւին «ՀԱՍԿԵՐ» ի յաւելուածները լինելու են՝ 2 պատկերազարդ հէքիաթ, 2 պատկերազարդ պատմուածք, 1 մանկական պիէս, 2 բնագիտական զրոյց, 2 համաշխարհային ժողովրդական աւանդութիւն, 3 մանկական վէպիկ, պատմուածք ու պիէս և 2 պրակ «Մանկավարժական գրադարան» ընտանեկան կրթութեան կարևորագոյն հարցերին նուիրված:

Բաժանորդագինն է ճանապարհածախսով.

Տարեկան .	4 ր.	Առանց յաւելուածների .	3 ր.
Ամսական .	— 35 կ.	» » .	— 30 կ.
Պարսկաստանում .	4 ր. 50 կ.	» » .	3 ր. 50 կ.
Արտասահման .	12 ֆր.	» » .	9 ֆր.
Սկզբից (1905 թ. սեպտ. մի՛ չև 1911 թ. վերջը)	16 ր.	» .	12 ր. 50 կ.

Առանձին բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Խմբագրութեան հասցէն՝ Թիֆլիս, Բէբուտօվսկայա փող. № 25. Тифлисъ, Ред. журнала „Аскеръ". Tiflis, (Caucase) Rédaction du journal «Hasker».

Թիֆլիսում գլխաւոր պահեստը «Գիր» գրախանութում. կարելի է գրվել նաև «Գուտտենբերգ», Բագւում՝ „Сотрудникъ", Երևանում՝ Պետրոս Յովհաննիսեանի, իսկ Վլադիկավկազում՝ Դէյկարխանեանի գրախանութներում:

«ՀԱՍԿԵՐ»-ին աշխատակցելու են՝ Աղայեան Ղ., Աղաբաբ Յ., Բաշինջաղեան Գ., Դեմիրճեան Դ., բժ. Ա. Զարգարեան, Իսահակեան Ավ., Լէօ, Խնկոյեան Աթ., Հայրապետեան Հ., Մարգար, Մելիք Հայկազեան Հեղինէ, Մեսեան Գ., Միրիմանեան Կ., Յովհաննիսեան Յովհ., Շիրվանզադէ, Ջաւախեցի, Սարգսեան Նիկ., Սիմակ, Տէր-Նիկողոսեան Շուշանիկ, Փափազեան Վրթ. և այլն:

Խմբագիր հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան
(հ. կ.) 1326. 6—1

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՑԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

— ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՁՐԻ —

ՆՄՈՒՇՆԵՐԸ և գները բարձր, միջակ և ցածր տեսակի ԱԼԻՒՐՆԵՐԻ՝ կրուպչատկա, սեանկա, ռազմօլ, նաև զանազան տեսակ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ: Ունեմ յայտնի ֆիրմաներից ներկայացուցչութեան իրաւունք և պատրաստում եմ ալիւր իմ սեփական ցորենից զանազան կայարաններում:

Որոշ շրջանների համար տալիս եմ ներկայացուցչութեան իրաւունք:
Դիմեցէք՝ СТАВРОПОЛЬ-губ. Мисаку А. ФАЛАКЯНЦУ.
Հեռագրի համար՝ СТАВРОПОЛЬ губ. ФАЛАКЯНЦУ.
Յարգանքով՝ Մ. Յ. ՖԱԼԱԿԵԱՆՑ
(հ. կ.) 1241. 18—8

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԿՈՊԷԿԱՆՈՑ ՕՐԱԹԵՐԹ

1 ԿՈՊ. „ԿԱՅԾԵՐ" 1 ԿՈՊ.

◆ Պարունակում է իր մէջ մեծ օրաթերթերի բոլոր բաժինները ◆
ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1911 Թ.

Տարեկան գինը 3 ռուբլի, ճանապարհածախսով 3 ռուբլի 50 կ., մէկ ամսվանը 30 կոպէկ: Այժմեանից բաժանորդագրվողները «ԿԱՅԾԵՐԸ» կը ստանան նաև այս տարի առանց բաժնեգնի յաւելման:

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 1 ԿՈՊ.

Խմբագրատան հասցէն՝ Тифлисъ. Эриванская площадь № 7.
Լոյս է տեսնելու ԱՅՍՕՐՎԱՆԻՑ ամեն օր ժամը 3-ին:
(ու.կ.հ.) 1318. 3—2

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Հիմնել ենք առևտրա-յանձնարարական և ներկայացուցչական

ԳՐԱՍԵՆԵԱԿ,

որտեղ ընդունում ենք ընդհանրապէս զանազան առևտրական և առանձնապէս Թարմ և չորացրած մրգեղէնի, կօնսերվանների և պիւրէների սպասման յանձնարարութիւններ: Խնդրում ենք դիմումի հետ չը մոռանալ նմուշներ ուղարկել:

Յարգանօք՝ Զ. Ն. ԽՐԽՐԵԱՆՑ և Տ. Զ. ԲԱԽՇԻՆՕՎ

Հասցեներ | С.-Петербургъ, Петербург. ст., Большой пр. 92.
Тифлисъ, Елизаветинская, 192.
(կ.) 973. 15—15

Լոյս տեսաւ եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ եւ ՊԱՏԻ

1911 Թ.
„ՇԻՐԱԿ"

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
Օրացոյցները
XIII տարի
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 320 երես

ՑՈՒՑԼՈՒԱԾԸ պարունակում է մուրհակների օրէնքներ և օրինակներ, չափ և կշիռ. դրամներ և արժէքաւոր թղթեր: Վարձատրութիւն դատական պրիստաւների, նոտարների, երդուեալ-հաւատարմատարների: Պօստ և հեռագիր, պօստային օրէնքներ. խնայողական գանձարաններ: Զինուորագրական օրէնքներ. Նորակոչ զինուորների չափը: Անցագիր և բողոքելու [illegible]: Կտակի և պայմանագրերի օրինակներ: ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.—Ռուսաստանի ազգաբնակութիւնը, Նրա աճումն ու խտութիւնը, կեանքի միջին հասակը, ազգերի թիւն ըստ հասակի, դաւանութեան և պարապմունքի: Գաղթականութիւն: Ժողովրդական կրթութիւնը. Նրա ծախսերը, գրագիտութեան չափը, դպրոցներ. Զօրքը. զանազան պետութիւնների զինուորական ծախսերն ու ուժը: Ժողովրդի առողջապահական դրութիւնը: Պետական ել և մուտքը: Հոգեբուժականութիւն: ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ.—Կեանքի նպատակը, օդը, կեանքի ապրիլ, չափաւորութիւն, խմիչքներ, կաշուի հոգատարութիւն, առողջապահական կանոններ, պատգամներ և իմաստներ: ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ.—Մեղուաբուծական. մեղուների մայր տալը, բռնածու և բոռ մեղուներ, բնատիկների միջոցները, փեթակների մաքրելը, ցեց, փորլուծութիւն, մեղուների մայրը, կերակրելը, գողութիւնը, արհեստական մոմաթերթեր և այլն: ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ.—Կաթնատու կովեր, կովերի կթելը, կաթի կեղծելը, բժշկական խորհուրդներ: ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ.—Խրատներ շերամապահներին: ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ.—Գիսաւոր աստղեր, միգամածներ, աստղերի հեռաւորութիւնը, աստղ-արեգակներ: ԳԻՏԱԿԱՆ.—Մարդու ծագումը, օդանաւեր և օդային թռիչքներ: ՊԱՏՄԱԿԱՆ.—Պասը զանազան ազգերի մէջ, ապրիլի 1-ին խաբելու սովորութեան ծագումը: ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ.—«Առտնին տեսարաններ», «Հօր խրատը որդուն», «Աչք և ականջ», «Ճշմարտութիւն», «Ծիծեռնակների ծնունդը», «Ճաշի ժամը», «Սրտի հէքիաթը», «Արցունքի լիճը», «Ինչ է սէրը», «Մարդկութեան պատմութիւնը», «Համբոյր», «Թագաւորների խնճոյքը»: ՀՆԱԳԻՏԱԿԱՆ.—Դիմագուշակ, բժշկութիւնը հին ժամանակներում, ցաւի համբերող և ցաւ չը զգացողներ, զարմանալի ձմեռներ և ձմեռ ամառներ: ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.—Հանելուկներ, խնդիրներ, խաղեր, ռեպուսներ, զուարճալի վիճակարան: ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ.—Երկաթուղի և շոգենաւեր:

150 ՊԱՏԿԵՐՈՎ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ 150 ՊԱՏԿԵՐՈՎ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻ առաջին երեսների վրա տպագրված են հայ և օտար հեղինակների ու գործիչների պատկերներ, այլ և Մեր պետական և դպրոցական հիմնարկութիւնների ազատ են պարապմունքից, ընտիր մտքեր, աֆօրիզմներ, հարուստ ժամանակագրութիւն, բանաստեղծական ընտիր քառեակներ: Երկրորդ երեսների վրա՝ ազգային տօների բացատրութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների բացատրութիւններ, առողջապահական, բժշկական խրատներ, արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ, արևելեան ազգերի կեանքից, զուարճալի պատմութիւններ, պատմական նշանաւոր դէպքեր հայկական, ռուսական և այլ ազգերի կեանքից, հետաքրքրական թւեր և տեղեկութիւններ: Ազգային ընտր. բանաստեղծութիւններ, առածներ, աշուղական խաղեր, սիրոյ երգեր, զուարճալի անեկդոտներ մեծ մարդկանց կեանքից: Գիւղատնտեսական գիտելիքներ, խոհարարական խորհուրդներ, տնային խաղեր: Ժողովրդական առածներ, երգեր, լէլէներ, երգիծաբանական հատուածներ, ծիծաղաշարժ նոր առակներ և այլն:

ՇԱՊԻԿԸ պատրաստված է լիտօգրաֆիայում մօտ տասը գոյնով, յայտնի նկարչի վրձնի գործ, եւրօպական յայտնի հրատարակութիւնների նմանողութեամբ, ճակատին տեղաւորված է Անիի աւերակների տեսարաններից մէկը:

Գները՝ պատինը—50 կօպ., ծոցինը—20 կ., զումարով գնողներին զեղչ:

Դիմել՝ Александрополь. типографія „Ширакъ", Карапету Апинянъ. Արտասահմանից՝ Alexandrople, Karapet Apinian (Caucase).

Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն կանխավճար: Աւելի մանրամասն բովանդակութիւնը, առանձին տպագրված, ցանկացողներին կուղարկվի ձրի:

Ալէքսանդրօպօլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով:
(կ.) 1248. 8—4

CONSTIPATION
PILULES DE
CASCARA
MIDY
Midy

ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
CASCARA MIDY
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ:

Ընդունելութեան չափը. 2 ԴԵՂԱՀԱՏ ԵՐԵԿՈՆԵՐԸ. ՊԱՌԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ:

Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հեղ և փորլուծութիւն: Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré. Парижъ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում:

(8, 18, 28) (M. 305088) 1050. 0—32

Типографія „Экономія", [illegible]-Ванская № 2.